

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1879 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԺԵ

14 ՌԵԿՏԵՄԲԵՐ 1879



Կ. ՊՕԼԵՍ

1879

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

№ 1 ԳՐԱՎ-ԳԱՐՈՒ, Պատրիարքարանի փողոց № 11

ԴԻԻԱՆՔ ԱԶԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅՐ ԴԻԻԱՆ

Ստեփան փաշա Ասլանեան	Ա. Արեւադէպ
Տիգրան էֆէնտի Եուսուֆեան	Բ. »
Յարութիւն էֆէնտի Մէրեմ-Գուլի	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Ա. Արեւադէպ
Դասպար էֆէնտի Չէրազ	Բ. »
Դարեգին էֆէնտի Մելիքեան	Գ. »

Ձեռնաստրեան դիւան

Յարաբերութեան դիւան

Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ
Հովհաննէս Քահանա Մկրեան
Տիգրան էֆէնտի Եուսուֆեան

Մկրտիչ էֆէնտի Խաւեան
Բարսեղ էֆէնտի Հալաճեան
Պօղոս էֆէնտի Պառնասեան

Դատարանի դիւան

Իրաւաստրեան դիւան

Սէրվիչէն էֆէնտի Արեւադէպ
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան
Դասպար էֆէնտի Չէրազ

Ներսէս վարդապետ Ասլանեան
Առաքել էֆէնտի Ալթուն-Տիւրքի
Նշան էֆէնտի Օտեան

Կալուածոց դիւան

Նախաճեռնութեան դիւան

Մինաս էֆէնտի Դափամաճեան
Յովհաննէս էֆէնտի Կրճիկեան
Արիկ էֆէնտի Ունճեան Արեւադէպ

Տօթթոռ Ռափաէլեան էֆէնտի
Յարութիւն էֆ. Մէրեմ-Գուլի Արեւադէպ
Միհրան էֆէնտի Չօլանեան

Համարակալութեան դիւան

Խմբագրութեան դիւան

Ստեփան էֆէնտի Փափազեան
Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան Արեւադէպ
Համբարձում էֆէնտի Մազպուլեան

Կարապետ էֆ. Խլթիւճեան Արեւադէպ
Դարեգին էֆէնտի Մելիքեան
Համբարձում էֆէնտի Ալաճաճեան

Ելմտական յանձնախումբ

Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան
Ղազար էֆէնտի Հովսէփեան

Մարդիս էֆէնտի Գալուքճեան
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան

ԱԶԴԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲՅՈՒՄ 1879 ԱՄԵՆ

Ն Ի Ս Տ Ժ Ե

14 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1879

ՆԱԽԱԴԱՆ. — Ամեն Տ. Ներսէս Սրբազան Պատրիարք

ԱՏԵՆԱՊԵՏ. — Տիգրան էֆէնտի Եուսուֆեան

ԱԶԴԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒՆԵՔ

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒՆԵՔ

ԵՐԵՍՓՈՒՆԵՔ

Ա. Վիճակ

Գումգաբու, Կետիկ փաշա

- 1 Կարապետ Եղս. Սերոբեան Բ 4
- 2 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ 3
- 3 Սիմոն Եղս. Սէֆէրեան Բ 4
- 4 Կարապետ Բ. Սէթեան Բ 3

- 24 Գրիգոր Պէրպէրեան Բ 4
- 22 Գէորգ Ստիվարճեան Բ 3
- 23 Խաչիկ Մանկասարեան Բ 4
- 24 Կարապետ Աղաբաճեան Բ 4

Բ. Վիճակ

Համբարձում Մազպուլեան

- 5 Մաթէոս Եղս. Իզմիրլեան
- 6 Պօղոս Վ. Խօրամեան
- 7 Յովհաննէս Բ. Մկրեան Բ 4
- 8 Գրիգոր » Աճէմեան Բ 3

- 25 Մինաս Դափամաճեան
- 26 Յովհաննէս Պոյաճեան
- 28 Ն. Մէղապուրեան Տօթթօր Բ 3
- 29 Պօղոս Պառնասեան Բ 4

Գ. Վիճակ

Սարգիս Աղաբէկեան Բ 4

- 9 Վահան Վ. Տ. Մինասեան
- 10 Յակոբ » Ա. Փափազեան Բ 3
- 11 Խաչիկ Բ. Տ. Սարգսեան Բ 2
- 12 Խորէն » Փէշիկլանեան Բ 3

- 30 Սահակ Ապրօ
- 32 Սենեքերիմ Մանուկեան Բ 4
- 33 Բարթոլոմէ Բիւրճիպաշեան Բ 2
- 34 Ատոմ Տէրպէշեան Բ 4

Դ. Վիճակ

Սարգիս Կիրտաղեան Բ 3

- 13 Ներսէս Վ. Ասլանեան Բ 3
- 14 Սուքիաս Բ. Ստեփանեան Բ 3
- 15 Յարութիւն Սերոբեան Բ 2
- 16 Վրթանէս » Պալեան Բ 3

- 27 Աւետիս Կիրտաղեան Բ 3
- (Բ. Վիճակ)
- Պէշիկլաշ
- 38 Անդրանիկ Կրճիկեան Բ 2

Ե. Վիճակ

Ալիքսան Խօրասանճեան Բ 7

- 17 Խորէն Սրբ. Նար Պէյ Բ 4
- 18 Յովհաննէս Վ. Փափազեան
- 19 Դարեգին » Թաթարեան
- 20

- 39 Բարսեղ Հալաճեան
- 40 Եփրատ
- 41 Մկրտիչ Բիւրճիպաշեան Բ 7
- 42 Սեպուհ Մազսուտեան

- Բ Բացակայութիւն առաջին
- Բ 2 Բացակայութիւն երկրորդ
- Բ 3 Բացակայ ընտանիք սպանաւ

- 43 Մարուգէ Ֆրէնկեան
- 44 Պօղոս Ենքսլճեան
- 45 Սիմոն Չէլիկեան Բ 3
- 46 Ստեփան Ասլանեան Բ 4

47 Յ. Շիշմանեան Տօթթօր Բ 4

48 Խաչիկաւար Ս. Կարապետ

- 49 Միհրան Պաճէճափուլեան Բ 3
- 50 Պօղոս Բորգոմեան
- 51 Նիկողոս Ալաճաճեան Բ 4
- 52 Տրդատ Կապաղեան

(Գ. Վիճակ)

Գասթմ Բաշա

53 Գասթար Չէրազ Բ 3

54 Արիկ Ունճեան Բ 4

55 Գրիգոր Սէլիմիճեան Բ 3

56 Գրիգոր Օտեան Բ 5

57 Սէրվիչէն Տօթթօր Բ 4

58 Ռափայէլեան Տօթթօր Բ 4

59 Միքայէլ Մօմճեան Բ 3

60 Կարապետ Քաղաղեան Բ 3

61

62 Միքայէլ

63 Յակոբ Նորատուկեան Բ 2

64 Տիգրան Եուսուֆեան Բ 7

65 Մկրտիչ Գազանճեան Բ 3

66 Աւետիս Գօլօլեան Բ 6

67 Նշան Օտեան

Պէշգոգ Ե. Ղալաքիս

68 Միքայէլ Մամիկոնեան (Գ. Վիճակ)

Ղուզղունճուգ Ե. Իճատիկ

69 Յովհաննէս Խոսեան Բ 7

70 Ստեփան Պէշիկլեան Բ 3

Գատըգիւղ	ԳԱԽԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահապետեան Բ 8	Կարին	121 Ստիան փառապետ
72 Մկրտիչ Մուրատեան Բ 7		Տիվրիկ
Նարյըգաբու	101 Սիմոն Մադուտեան Բ 8	122 Նշան Գարադաշ Բ
73 Յակոբ Եղմէնիճեան Բ	Քեօրանեա	Զեյրուն Է. Մարաշ
Եհնիմանալիկ Սամարիոյ	102 Մ. փառապետ Տօրթօր	123
74 Պօղոս Մկրտիչեան Բ 3	Անդրիանոսապօլիս	Տրապիզօն
Թօփգափու	103 Վիլէն Ապաուլլաճ Բ 2	124 Տիգրան Տ. Ներսէսեան Բ 8
75 Յովհաննէս Մարգարեան	Նիկոմիդիա	Պաղտատ
Էյուսպ Ս. Եղիա Է. Ս.	104 Կ. Ս. Իւթիւճեան	125 Մելքօն Իսկէնտէրեան Բ 9
Աստուածածին	Ակն	Տիգրանակերտ
76 Գարեգին Յ. Մէլիքեան Բ 9	105 Աւետիս Պարոնեան	126 Միհրան Զօպանեան
Գուրուբէշմէ	Ղարափաար	Վան
77 Ասափա Իկիտպաշեան	106	127
Հիսա Է. Պօյաճի գիւղ	Արաբկեր	Աղբամա
78 Յովհաննէս Արշակունի Բ 9	107 Կարապետ Խաչիկեան	128
Նոր գիւղ Է. Սրեկիս	Բաղէշ	Հայեալ Է. Այնթապ
79 Ղազար Հովուեան Բ	108	129
Պալատ	Պուսա	Սեբաստիա
80 Մկրտիչ Գ. Էսաեան Բ 3	109 Քրիստոստուր Ղազարոսեան	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
81 Յովհաննէս Կրճիկեան Բ 3	Եւդոկիա	Ռոսսոնիս
82 Տեղեմաք Էնքսէրճեան	110	131
Քարակեօմրիւկ	Ամասիա	Կարս
83 Սեպուհ Թիւրապեան Բ 2	111 Համբարձում Ալաճաճեան	132 Արթուր Յ. Սյւլադեան
84	Բալու	Զմշկածագ
(Ե. Վիճակ)	112 Յովհաննէս Ազնաւորեան Բ 9	133 Համբարձում Սարգսէլիճեան
Սամարիա	Եղեսիա	Գաղատիա
75 Ալիքսան Պէշիբեան	113 Յակոբ Իւթիւճեան	134
88 Եղիազար Մէլիքեան Բ 10	Մանգըլիս	Ատանա
86 Մինաս Զաֆճաֆեան	114	135
88 Նազարէթ Շահապետեան	Հաճըն	Լիւթերդ
89 Յարութիւն Թիւլեան	115	136 Մատթէոս Ալեքսանեան
90 Յակոբ Արշակ Բ 2	Երզնկա	Եօզղատ
91	116 Ռէթէոս Պէրպէրեան	137 Լօղօֆէթ Պալօղեան
92	Թեքիրտաղ	Մալաթիա
93	117 Տիգրան Գ. Սինանեան	138 Գէորգ Վարդանեան Բ
94	Կեսարիա	Իզմիր
Խաղիւղ	118 Գէորգ Գըրճեան	139 Պապի Պապօեան
95 Առաքել Ալթուն Տիւրքի Բ 8	Խաբբերդ	Եգիպտոս
96 Ռէթէոս Պէշիկճեան Բ	119	140
97 Սարգիս Արաշամեան Բ 9	Պալքեքեր	
98 Մ. Արծրունի Տօրթօր Բ 6		
99 Սարգիս Քալուքճեան Բ 9		
100 Աթանաղոսէ Արապեան Բ 10		

Օ Ր Ե Կ Ե Ր Գ

- Ա. Բողոքագիր Տիգրանակերտի դադարեալ Առաջնորդ Տ. Փիլիպպոս Եպիսկոպոսի ,
- Բ. Տեղեկագիր Մայր դիւանի ի վերայ 57 անդի խնդրոց :
1. Առաջարկութիւն խիւղճեան էֆէնտիի հին պարտուց մասնակի վճարման համար շնորհակալութեան քուէ տալու :
 2. Առաջարկութիւն խառն ժողովոյ վանականաց գոյից յետ մահուան վանքին մնալու մասին :
 3. Հարցում Ալիքսանեան էֆէնտիի առ Բաղ. ժողովն պանդուխտ աղգայնոց աղգային տրոց մասին :
 4. Առաջարկութիւն Բալամաճեան էֆէնտիի Երեսփոխանական ընտրութեանց հսկող Յանձնաժողովոյ նկատմամբ :
 5. Հարցում խառն ժողովոյ իւր մեծամասնութեան նկատմամբ :
 6. Բողոք Երեսփոխանաց Երզնկայի առաջնորդ Ալեքսան Տ. Գրիգորիս Եպիսկոպոսի դէմ :
 7. Աղբրագիր պանդուխտ Տիվրիկցոց :
 8. Առաջարկութիւն Ատենապետ փաշայի , Արքեպիսկոպոսաց , Եպիսկոպոսաց և վարդապետաց նկատմամբ :

ԱՅԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1.

Ընդ նախագահութեամբ Ամենապատու Տ. Ներսէս Սրբազան Պատրիարք Հօր եւ Ատենապետութեամբ Տիգրան էֆէնտիի Եռուֆեան Ատենաք բացուեցաւ ժամը 8½ ին, ի ներկայութեան 38 Երեսփոխանաց , որոց թիւն 51 ի յանդեցաւ ի վերջէ :

Վաւերացումն ԺԳ. Նիստի ատենագրութեան

Ատենապետ էֆէնտին ի դիտողութիւն հրաւիրեց զԵրեսփոխան ԺԳ. Նիստի ատենագրութեան վրայ :

ՓԱՓԱԶՆԱՆ Ս. ԷՅ. — Այդ նիստին մէջ

երբ կեդրոնական վարժարանի խնդիրը կը յուզուէր, Սրբազան Պատրիարքն իւր բացատրութեանց մէջ այնքան կարեւորութիւն եւ ստիպողութիւն ընծայեց խնդրոյն, որ խղճմտանքիս դէմ է, եւ ամօթ կզգամ, ըսաւ որ այսքան երկարաձգի այս խնդրոյն գործադրութիւնն, եւ սակայն կը տեսնեմ որ Նորին Սրբազնութեան այս խօսքն, որու վրայ յարեցանք իւր առաջարկութեան, ատենագրութեան մէջ կը պակսի, թէ եւ անոր յիշատակութիւնը կարեւոր էր:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես այդ ատենագրութիւնը դեռ այսօր կստանամ նախընթաց նիստի ատենագրութեան հետ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պարտ կը համարիմ յայտնել որ զիտողութեան ենթարկուած ատենագրութիւնը քանի մ'օր առաջ ցրուած եւ ամէն Երեսփոխանք ստացած են զայն, իսկ եթէ Քրիստոստոսը էֆէնտին զայն դեռ այսօր կընդունի, սխալման մ'արդիւնք է անշուշտ, որ իւր մասին տեղի ունեցած է միայն:

Ուրիշ զիտողութիւն տեղի չունենար եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ ժ. Գ. նիստի ատենագրութիւնն, եւ ժողովն եղած զիտողութեամբ հանդերձ ընդունելով՝ ԿԸ ՎԱԻԵՐԱՏՆԷ զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը մնայ այժմ վերջին ժ. Գ. նիստի ատենագրութիւնն, որ ժողովոյս գումարումէն քանի մը ժամ առաջ ցրուած է, եթէ բաւական միջոց ունեցաք զայն կարդալու, զիտողութեան կենթարկենք ու կը վաւերացնենք:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Կառաջարկեմ յաւաքիկայ նիստին թողուլ այդ ատենագրութեան վաւերացումը:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Կը կրկնեմ:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Մենք ամբողջ

կարդացինք զայն, եւ պատճառ մը չկայ վաւերացումը յետաձգելու:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Պատճառն այն է, որ ըստ կանոնի ատենագրութիւնը նիստէն քսան եւ չորս ժամ առաջ պէտք է ցրուած ըլլայ եւ դեռ մենք նոր ստացանք:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ուրիշ անգամներ ալ պատահած է որ ատենագրութիւնն նիստի օրն ցրուի, սակայն ժողովը՝ նկատողութեան առած եւ վաւերացուցած է, եւ ինչո՞ւ յետաձգէ, քանի որ Երեսփոխանք բաւական միջոց ունեցած են զայն կարդալու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս խնդիրն երկար վիճաբանութեան չկարօտիր եւ միայն քուէ մը պէտք է զայն լուծելու համար, ուստի ժողովին կը հարցնեմ թէ կուզէ՞ նախորդ նիստի ատենագրութեան վաւերացումը կատարել այսօր, թէ ոչ յետաձգել պատշաճ կը դատի:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին խընդիրը քուէի կը դնէ, եւ ժողովը մեծադոյն մասամբ ԿՈՐՈՒՆ Է յառաջիկայ նիստին վերապահել ժ. Գ. նիստի ատենագրութեան վաւերացումն:

2.

Բացակայութիւն Երեսփոխանաց

Երեսփոխաններէն՝

1. Տ. Սիմէոն Եպիսկոպոս Սէֆ'րեան
2. Տ. Կարապետ » Սերովբեան
3. Գրիգոր Էֆէնտի Պէրպէրեան:

զրով ծանուցած լինելով թէ անձնական տկարութեան պատճառաւ ստիպուած են այսօրեայ նիստէն բացակայ մնալ, Ատենապետ է-

Ֆէնտին անոնց անունը կը յիշատակէ եւ բացակայութիւնն իւր օրինաւոր՝ արձանագրել կուտայ ներկայութեան տուժարին մէջ:

3.

Թիֆլիսի Գայիանեան Հայ օրիորդաց ուսումնարանին տրուած նուէրն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Թիֆլիսի Գայիանեան Հայ օրիորդաց ուսումնարանին Տեսչութեան կողմէ՝ Պատրիարքարան նամակ մ'ուղղուած է, որ կը ծանուցանէ թէ տեղւոյն ազգայիններէն Առուանեանց Թորոսեան աղա Խաչատուր եւ իւր լծակիցն տիկին Սալօմէ՝ ի յիշատակ իրենց վաղամեռիկ որդւոյն՝ զրամական նուէր մ'ըրած են Գայիանեան Ուսումնարանին, յատուկ պայմանագրով մը, որու գործադրութեան հսկող նշանակուած լինելով ի մէջ այլոց՝ նաեւ Ազգ. Ժողովը, Ուսումնարանին տեսչութիւնը՝ նոյն պայմանագրին մէկ վաւերացեալ օրինակն իւր գրոյն հետ հաղորդած է Ազգային Պատրիարքարանի, ըստ փափաքանաց ազգասէր նուիրատուաց: Հետեւապէս Ամենապատիւ Սրբազան Պատրիարքն սոյն կրկին գրութիւններն, այն է Ուսումնարանին տեսչութեան նամակն եւ նուիրատուութեան պայմանագիրն հաղորդած է իւր կողմէ՝ Ազգային Ժողովոյս, զորս տհաւատիկ կը ներկայացնեմ ձեզ:

Գայիանեան Ուսումնարանի տեսչութեան զիրն:

Կոստանդնուպօլսոյ Հայոց Պատրիարքարանի

Թիֆլիսաբնակ Խաչատուր Թորոս-

եան Առուանեանց եւ կին նորա Սալօմէ Աւետիքեան Առուանեանց իրանց վաղամեռիկ որդւոյ Տիգրանայ յիշատակը անմոռաց թողնելու համար ներկայ 1879 ամի Մայիսի 23 ին նուիրեցին Թիֆլիսի Սուրբ Գայիանեան Հայ օրիորդաց միջնակարգ Ուսումնարանին մի հատ թագաւորական երկրորդ փոխառութեան 5 000 արեր վիկրիշնի տոմսակ. սէրի 10, 002, նումէրօ 46 եւ ներկայացրին Ուսումնարանիս վարչութեանը՝ այդ նուիրաբերութեան համար նրանց կողմից կադմած մի պայմանաթուղթ, որոյ մէջ մի առ մի որոշած են վարչութեանս վերայ դրած պարտականութիւնը, որոց ճշդութեամբ կատարման համար նշանակել է ի միջի այլոց եւ Կոստանդնուպօլսոյ Ազգային Ժողովոյ հսկողութիւնը:

Վասն որոյ յիշեալ պայմանաթղթի իններորդ յօդուածի համաձայն, Ուսումնարանիս վարչութիւնը ընդ սմին առաքելով Պատրիարքարանի պայմանաթղթի վաւերացրած պատճէնը, ունի պատիւ խնդրելու որ Պատրիարքարանդ բարեհաճի սոյն պատճէնի ստանալու մասին տեղեկացնէ վարչութեանս:

Տեսուչ Ուսումնարանի

Նիկողայոս Խոսրովեանց
Քարտուղար վարչութեան
Ա. Քիշմիշեան

17 Հոկտեմբեր 1879

Թիֆլիս

Նուիրատուութեան պայմանագրի պատճենը

Թիֆլիսու Սուրբ Գայիանեան Հայոց
օրիորդաց Միջնակարգ Ուսումնարանի
վարչութեան

Պատիւ ունիմք յայտնել վարչու-
թեանդ, թէ անդրանիկ օրդին մեր Տիգ-
րան, ծնեալն 9 ն Նոյեմբերի 1866 ամի,
ունէր գերազանց յատկութիւններ, յոյս
կար, որ նա կը լինէր պիտանի անդամ
իւր սիրելի ազգին, բայց ամսոս որ 28
Նոյեմբերի անցեալ 1878 ամի, վախճա-
նեցաւ բորբոքում ուղեղի ցաւով և թա-
ղեցաւ Թիֆլիսու Հայոց Վերայի գերեզ-
մանատանում:

Ուստի վաղամեռիկ Տիգրանիս յի-
շատակը անմեռաց թողնելու իր սիրելի
ազգի զաւակներէ սրտերում, մեք նորա
վշտալի և անմխիթար ծնօղքս, կամենում
ենք Թիֆլիզու Հայոց Սուրբ Գայիանեան
օրիորդաց միջնակարգ Ուսումնարանին
նուիրել մեր սեպականութեանց, նախ
իւրաքանչիւր տարի 9 ն Նոյեմբերի, հինգ
ռուբլի, և երկրորդ՝ ընդ ամին առաջի
առնելով, նուիրում ենք այժմէն իսկ մէկ
հատ թաղաւորական երկրորդ փոխա-
ռութեան 50 յ0 վիկրիշնիյ տոմսակ սե-
րի 10,002 (տասը հազար երկու) Նու-
մէրօ 46 (քառասուն և վեց) յետագայ
պայմանաւ:

1. Մեղանից ստանալի իւրաքան-
չիւր տարի հինգ ռուբլի և տոմսակի սահ-
մանեալ տոկոսիքը վարչութիւնդ ունի ի-
րաւունք գործածել օգուտ այդ Ուսում-
նարանին, որպէս և կամի. միայն վար-
չութիւնդ անպատճառ ապահովացնել

պարտաւոր է տոմսակը նախ քան վիճա-
կախաղի ժամանակներն, որ եթէ այդ
տոմսակը Տիրաժումը գուրս գայ, գրա-
փոխարէն ստացուի մէկ հատ Նոյնպիսի
տոմսակ 50 յ0 վիկրիշնիյ երկրորդ փոխա-
ռութեան և այդ մասին վարչութիւնդ
մեզ և կամ մեր ժառանգներուն առան-
ձին իմացում տայ և հրատարակէ տե-
ղական ազգային լրագրների միջոցաւ, յի-
շելով նոր տոմսակի սէրի և Նումէրօ:

2. Եթէ վիճակախաղից՝ երբ և ի-
ցէ այդ տոմսակով կամ գրա փոխարին-
եալ տոմսակով տարուի գումար ինչ, այն-
ժամանակներում տարած գումարներն
ստանալու իրաւունք ունի միայն վարչու-
թիւնդ:

3. Եթէ տարած գումարն լինի 500
ռուբլի, կամ 1000 ռուբլի, կամ 5000
ռուբլի, կամ 8000 ռուբլի, կամ 10,000
ռուբլի, կամ 25,000 ռուբլի, և կամ
40,000 ռուբլի, յայնժամ այդպիսի գու-
մարներն լինելու են սեպականութիւն
յիշեալ օրիորդաց միջնակարգ աւսումնա-
րանին իբրև Մայր գումար, որոց տոկո-
սիքը վարչութիւնդ ունի իրաւունք գոր-
ծածել Ուսումնարանիդ համար որպէս և
կամի, յատկացնելով բարի գործ ինչ
Տիգրանիս յիշատակ, զօր օրինակ, յա-
նուն նորա որդեգրուհի պահել, կամ
գրքեր տպել, կամ դասագիրք ձրի բաժ-
նել խնդներուն, կամ նրանց համար ըզ-
գեստ կարել տալ և այլ ինչ որ արժան
կը դատէ վարչութիւնդ, հրատարակելով
այն արարքը յընդհանուր գիտութիւն:

4. Եթէ տարած գումարն լինի 75,
000 ռուբլի, դրանից վարչութիւնդ պար-
տաւոր է տալ հինգ հազար ի սեպակա-
նութիւն Ներսէսեան Հայոց հոգևոր ազ-

գային դպրոցին, իսկ մնացած 70,000
ռուբլին լինելու է մայր գումար օրիոր-
դաց Ուսումնարանիդ, որոյ տոկոսիքը
վարչութիւնդ ունի իրաւունք գործածել
ինչպէս վերել յայտնած է:

5. 200,000 ռուբլի, դրանից 10,
000 վարչութիւնդ պարտ է տալ սեպա-
կանութիւն յիշեալ Ներսէսեան դպրոցին,
իսկ հարիւր հազար ռուբլիով գնէ վար-
չութիւնդ կամ կառուցանէ Սուրբ Գայի-
անէ օրիորդաց ուսումնարանիդ համար
մէկ յարմար տուն իր պարտէզով, մնա-
ցած 90,000 մնալու է մայր գումար այդ
Ուսումնարանիդ համար, որոյ տոկոսիքը
վարչութիւնդ գործածելու է ինչպէս վե-
րել յայտնած է:

6. Ներսէսեան դպրոցի վարչու-
թիւնը ստանալով յիշեալ 5000 ռուբլի
կամ 10,000, պարտաւոր է իւրաքանչիւր
հինգ հազարի տոկոսից պահել նոյն դրպ-
րոցի միջում յանուն Տիգրանի Սուրբ
եանց մէկ մէկ Ստեպենդեանդ յառա-
ջագէմ խեղճ աշակերտներից, որոնք եթէ
ուսման ընթացք աւարտելից յետոյ հո-
գևորական լինին կամ քահանայ, կամ վար-
դապետ հոգաբարձութիւն դպրոցին յայն-
ժամ պարտաւոր է տալ նրանց միանը-
ուագ իւրաքանչիւրին երեք հարիւրական
ռուբլի մնացած տոկոսիքն լինելու են օ-
գուտ դպրոցին: Իսկ եթէ Ներսէսեան
դպրոցի վարչութիւնն չը համաձայնի այս
պայմանին, կամ ապագային չկատարէ
այս պայմանը, այդ միջոցներում վար-
չութիւնդ ունի իրաւունք յիշեալ գու-
մարն չտալ, եթէ տուած է, յետ առ-
նուլ և տալ (այլ) Հայոց ազգային Ու-
սումնարանի միում, որ կամի կատարել
յիշեալ պայմանը:

7. Եթէ կրկին և կրկին վիճակա-
խաղից տրուի տոմսակով գումարներ,
յայն ժամանակներում վարչութիւնդ այդ
գումարները ևս գործածելու է համա-
ձայն վերոյիշած 3, 4, 5, 6 յօդուածնե-
րին միայն այնու բացառութեամբ որ ե-
թէ երկու հարիւր հազար ռուբլի ընկ-
նի, նրանից հարիւր հազար ռուբլին տայ
ի սեպականութիւն Հայոց ազգային չքա-
ւոր ծխական տասը ուսումնարանների,
հինգը Ռուսաստանում եղած, ի թիւս ու-
րոց լինելու է Սուրբ Էջմիածնի ճեմարա-
նըն, իսկ հինգը Թուրքաստանի Հայաս-
տանում եղածներուն իւրաքանչիւրին
տասը հազարական ռուբլի (10,000
ռուբլի):

8. Վիճակախաղից ընկած յօդուա-
ռուսումնարանիդ մայր գումարները վար-
չութիւնդ պարտաւոր է տալ շահեցնե-
լու, ուր և ում և որքանի կամենայ, մի-
այն դրա մասին իմացում տայ գրաւոր
մեզ և զկնի մեր մահուան մեր ժառանգ-
ներուն:

9. Եթէ վարչութիւնդ բարեհաճի
յիշեալ պայմանները կատարելու. ուստի
խնդրում ենք առնել հետեալը, նախ
այս մեր նուիրական թուղթը տպել տալ
Հայոց լրագրներում և ամսագրներում.
երկրորդ՝ որա օրինակներից վարչութե-
նէդ վաւերացմամբ և ուսումնարանիդ
կնիքով հաստատած տալ մէկ հատ մեզ.
մէկ հատ Թիֆլիզու Ներսէսեան Հոգևոր
Ուսումնարանի Հոգաբարձութեան. մէկ
հատ Կոստանդնուպօլսոյ Ազգային Ժողո-
վոյն և մէկ հատ Սրբազան Սինօդին Էջ-
միածնայ, վասն զի ամենքս էլ ունինք ի-
րաւունք հսկելու վերոյգրեալ պայմանի

կատարման, ինչ որ իւրաքանչիւրներին կը վերաբերուի :

10. Եթէ վարչութեանդ կողմանէ յիշեալ պայմաններէ մէկն ու մէկն. կամ քանիսը եւ կամ բոլորովին չկատարուի, կամ եթէ յիշեալ Սրբոյն Գայիանեան ուսումնարանը որ եւ իցէ պատճառով խափանուի, յանժամ մննք կամ մեր ժառանգները իրաւունք ունինք յիշեալ մայր դումարները, թէ տունը եւ թէ տոմսակը կամ ներկան եւ կամ փոխարինածը յետ առնուլ եւ անպատճառ ընծայել Հայոց ազգային մէկ Ուսումնարանի ուր տեղ որ լինի եւ ինչ պայմանաւ կամենանք. միայն յանուն Տիգրանի Խաչատուրեան Առանեանց, հանելով նրանից տասանորդ մեր կամ մեր ժառանգների ծախսի համար :

Ստորագրութիւնք

Խաչատուր Թորոսեան Առուանեանց

Սալոմէ Աւետիքեան Առուանեանց

Համաձայնէ ընդ իսկականին, Նախագահ Սուրբ Գայիանեան Հայ օրիորդաց միջնակարգ ուսումնարանի վարչութեան

Տեսուչ Ուսումնարանի

Նիկողայոս Խոսրովեանց

23 Մայիսի 1879 ամի

Թիֆլիս

Վաւերացրեց՝ քարտուղար Վարչութեան

Ա. Քիչմիլեան

(Կնիք Ուսումնարանի)

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս գրութիւններէն

տեղեկացաք անշուշտ նուիրատուութեան պայմաններուն, եւ այն պարտականութեան, զոր նուիրատուք կը դնեն Ազգ. Ժողովոյ վրայ, շնորհ ըրէք ուրեմն այս մասին յայտնել ձեր կարծիքը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Որովհետեւ ազգասէր նուիրատուք փափաքեր են որ Ազգ. Ժողովը հսկէ իրենց նուիրատուութեան պայմանաց գործադրութեան վրայ, ոչինչ կը մնայ մեզ ընել, այլ շնորհակալեօք արձանագրել այդ պայմանագիրն, եւ վերջացնել խնդիրն :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Առաջին ընթերցմամբ ես չկրցի կատարելապէս ըմբռնել խնդիրն, եւ չեմ կարծեր որ կարելի լինի շտապաւ որոշում մ'ընել եւ անցնիլ Թիֆլիսի Գայիանեան Ազգային ուսումնարանին նուէր մը կամ կտակ մը կըլլայ, եւ հսկողութեան պաշտօն մը կը վերագրուի Ազգ. Ժողովին, բայց այդ հսկողութիւնն ինչ կերպով կարելի պիտի լինի գործադրել, եւ պատասխանատուութիւն մ'ըստանանք, պէտք է նախապէս այս կէտերը պարզել, եւ կատարեալ զազափար մ'ըստանալ. ուստի ես լուսաբանութեան կարօտ կը գտնեմ խնդիրը եւ կառաջարկեմ նախաքննութեան յղել :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ այդ մասին բարեկամս Մէրեւմ-Գուլի Էֆէնտիի համաձայն եմ եւ նախաքննութիւն կառաջարկեմ Այս առթիւ կուղեմ նաեւ երկու խօսք ընել նմանօրինակ խնդրոյ մը վրայ : Սիւրիւհարի ազգայիններէն Յակոբ Էֆրեմի Ներսէսեան տեղւոյն եկեղեցին եւ վարժարանն ի հիմանէ կառուցանել տուած է իւր անձնականէն 2000 իրա ծախք ընելով, եւ որովհետեւ Ազգ. Ժողովը ուրիշ առթիւ մը լազգային բարեգործական հաստատութեան մը հիմնարկութեան համար շնորհակալութիւն յայտնած է, շնորհակալութեան ըուէ տալ կառաջարկեմ նաեւ Սիւրիւհարի եկեղեցին եւ վարժարանն կառուցանել տուող ազգասէր քարերարին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրն Թիֆլիսի աղջ

կանց ուսումնարանին եղած նուիրատուութեան վրայ է, իսկ Գալիամանեան Էֆէնտին այս առթիւ ուրիշ առաջարկութիւն մը կը ներկայացնէ : Արդ բաժնիով այս երկու խնդիրներն իրարմէ, քուէի կը դնեմ առաջինն, հասկընալու համար թէ կուղե՞ ժողովը Թիֆլիսի վարժարանին նուիրատուութեան խնդիրն նախաքննութեան յղել, ինչպէս Մէրեւմ-Գուլի Էֆէնտի կառաջարկէ :

Հետեւապէս Ատենապետ Էֆէնտին քուէի կը դնէ խնդիրն, եւ Ժողովը մեծագոյն մասամբ կ'ընտելէ ըստ առաջարկութեան Մէրեւմ-Գուլի Էֆէնտիի նախաքննութեան յանձնել զայն, հետեւապէս կ'ընտելի խնդիրն կառուածոց եւ Դաստիարակութեան միացեալ զիւանաց :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Հիմա կարգն եկաւ Քափամանեան Էֆէնտիի առաջարկութեան, խօսք ուղող կա՞յ այս մասին :

ԷՆՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Այս մասին ամենէն առաջ սա պէտք է դիտնալ թէ պաշտօնական տեղեկութիւն մը հաղորդուած է ժողովիս, Սիւրիւհարի եկեղեցւոյն եւ վարժարանին կառուցման համար կատարուած նուիրատուութեան վրայ : Կը խնդրեմ որ Դիւանը բարեհաճի տեղեկութիւն մը տալ մեզ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը այս մասին որ եւ է պաշտօնական տեղեկութիւն չունի :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այս խնդրոյն վրայ ինչպէս Քափամանեան Էֆէնտին, նոյնպէս եւ մենք լրագրաց հրատարակութիւններէն միայն տեղեկութիւն առած եւ լսած ենք միանգամայն որ Ս. Պատրիարքը օրհնութեան գիր յուղարկած է նուիրատու Էֆէնտին. եթէ ստոյգ է այս լուրը, պէտք է որ Նորին Սրբազնութիւնն ի պաշտօնէ տեղեկութիւն տայ մեզ այս մասին, որպէս զի Ժողովը կարենայ շնորհակալութեան ըուէ տալ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Այս նուիրատուութիւնը հռչակուած է Սիւրիւհարի Թաղ. խորհրդոյ կողմէ հրատարակուած պաշտօնական տեղեկութեամբ, եւ Սրբազան Պատրիարքն ալ օրհնութեան գիր յուղարկած է նուիրատուին :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Այս խնդրոյն վրայ ինչ տեղեկութիւն որ տուաւ այսօր Քափամանեան Էֆէնտին, նոյնն ասկէ առաջ ինձ եւս եկաւ հաղորդեց, ուստի եւ ես մասնաւոր օրհնութեան գիր մ'ուղղեցի նուիրատու անձին, ինչպէս սովորաբար ըրած եմ ուրիշ նմանօրինակ պարագայից մէջ :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Իմ կարծիքս այն է՝ որ այս տեսակ պարագայից մէջ պէտք է որ Ժողովը պաշտօնական մարմնոյ մը կողմէ հաղորդուած տեղեկութիւն մ'ունենայ իւր Դիւանին վրայ եւ ըստ այնմ տնօրինէ ինչ որ արժան է : Ուստի լաւ կըլլայ եւ օրինաւորութեան համաձայն խնդիրը յղել Վարչութեան եւ պաշտօնապէս տեղեկութիւն ստանալ այս մասին :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Մէրեւմ-Գուլի Էֆէնտիի դիտողութեան ի պատասխան կը յիշեցնեմ որ Ազգ. Ժողովը երբ ասկէ առաջ Զմիւռնիոյ ազգային հիւանդանոցի կառուցման համար շնորհակալութեան ըուէ տուաւ Սպարթալեան եղբարց, պաշտօնական մարմնոյ մը կողմէ իրեն հաղորդուած տեղեկութիւն մը չկար, այլ Քրիստոստոս Էֆէնտիի առաջարկութեան վրայ տուաւ իւր ըուէն, ես ալ նոյն օրինակին հետեւելով այս առաջարկը ներկայեցի, որու նպատակն ուրիշ բան չէ, այլ քաջալերել ազգին ծառայողներն իրենց բարեգործութեանց մէջ :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ես նպատակ չունիմ բնաւ դատապարտել եղած առաջարկութեանց ոգին, եւ կամ շնորհակալութեան ըուէ զմանալ այն անձանց, որ ազգին մեծ ծառայութիւններ կը մատուցանեն, այլ կանոնական դիտողութիւն մը կընեմ միայն, որ

անձնականի չվերաբերիր, եւ որու նպատակն
ուս է որ, Ազգ. Ժողովն այսպիսի պարագայից
մէջ լիակատար եւ ճշգրիտ տեղեկութիւններ
քաղելէ ետեւ՝ տայ իւր քուէն, եւ ոչ թէ
հարեւանցի եւ անսպաշտօնական ծանօթու-
թեանց վրայ, որոց ստուգութիւնն երաշխա-
ւորեալ չկրնար լինիլ անշուշտ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Յայտնի է որ առա-
ջարկութիւններն ըստ կանոնի գրով պէտք է
ներկայանան Ժողովին, ուստի լաւ կըլլայ,
Քախմաման էֆէնտի, որ ձեր առաջար-
կութիւնը գրով մատուցանէք, զոր Ազգային
Վարչութեան յղելով պէտք եղած տեղեկու-
թիւններն ստանալէ ետեւ՝ կը տնօրինենք զար-
ժանն: Արդ եթէ Ժողովը կը հաւանի, այս
կերպով ելք կուտանք խնդրոյն:

ԶԱՅՆԵՐ. — Այո՛, այո՛:

Ժողովը ԿԸ ՀԱՒԱՆԻ Ատենապետ էֆէն-
տի գիտողութեանց:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ուրեմն երբ Քախմ-
աման էֆէնտին հաճի գրով մատուցանել
իւր առաջարկն, կը յղենք զայն Վարչութեան
այս նուիրատուութեան նկատմամբ իւր տե-
ղեկութիւնները Ժողովիս հաղորդելու համար:

Այժմ ատենական գործողութեանց կար-
գին մէջ Տիգրանակերտի խնդրոյն վերաբեր-
եալ քանի մը գրեր միայն մնացին Ժողովիդ
հաղորդուելիք, բայց ըստ որում խնդիրն ար-
դէն Օրակարգին մէջ առաջին տեղը կը բռնէ,
եւ Ժողովը ատենական գործողութեանց ա-
ւարտումէն ետեւ անմիջապէս զայն նկատու-
թեան պիտի առնու, ուստի Օրակարգին
կանոններ եւ ուղղակի ձեռք կառնունք խն-
դիրը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ



Բողոքագիր Տիգրանակերտի զաղարեալ
Առաջնորդ Տ. Փիլիպպոս Եպիսկոպոսի

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ահաւասիկ կը ներկա-
յացնեմ ձեզ սոյն խնդրոյն նկատմամբ Տիգ-
րանակերտէն եկած գրերն, որոց մին հեռա-
գիր մ'է, զոր Ս. Պատրիարքը հաղորդած է
Ժողովիս, եւ միւսն առ Ազգ. Ժողովն ուղ-
ղեալ հանրագիր մը 500 ստորագրութեամբ,
որով Փիլիպպոս Եպիսկոպոսի վերադարձը կը
խնդրեն:

Էրմէնի Բաթրիքլիկի ճանիպի
ալիսինէ

Պին պաշի Թրօթըրըն վէ Պէյքըր
փաշանըն պուրայա աղիմէթլէրինտէն շէհ-
րիմիզին էհէմմիյէթի արթըյօր, պուրա
միլլէթիմիզ իսէ պիլաքս ֆէվրէլատէ բէ-
րիշանիէթտէ պուլունույօր, ճիսմանի բու-
հանի մէճլիսլէր վէ տեղապահ եօզ-
հիւքմինտէ տիրէր, միլլէթէ պիլ վէքեա-
լէ հազգընը քաղանտըրաճաք պիր հէյ-
էթի բէսմիյէ եօզ, Ալլահ աչընա եա
Փիլիպպոս Եպիսկոպոսու, եա զայէթ էհլի-
էթլի պիր տեղապահ, եախօտ Ուրֆա
մուրախսար Խորէն Եպիսկոպոսու մու-
վազաթէն սէրիէն կէօնաէրմէնիզ:

ՊՕՂՈՍ ԽԱՆՏԱՆԵԱՆ

23 Դեկտ. 1879

Բարձրաշնորհ Սրբազան Հայր
և Ազգային Ընդհանուր Ժողովոյ

Բարերար Տեառք,

Ըստ հեռադրական խոստման ձեր
Ամենապատուութեան տակաւին բարե-
կարգութեան մի նշոյլ չերեցաւ, տեղւոյս
Ժողովուրդն՝ անհավիւ և գայլահալած ոչ-
խարի պէս՝ տարտամ վիճակի մէջ է, ոչ
յեկեղեցի կը յաճախէ և ոչ հոգեւոր մա-
տակարարութեան ներկայ կը գտնուի,
ընկերութիւնք ցիր ու ցան և վարժա-
րանք փակ:

Սրբազան Հայր, զթաղէք, վիճակիս
գլխադէ ազգայնոց սոյն տարտամու-
թեանը, ներքին և արտաքին հարստա-
հարութեամբք ցարդ նեղուած եմք և կը
նեղուինք:

Անտանքի նեղութեան մէջ տանջը-
ւող խեղճ գաւառացիներն անգամ ազ-
գանամ առաջնորդներնուս հովանաւո-
րութեամբը կը մխիթարուէին, սակայն
ի բացակայութեան նորին սրբազնութեան՝
քաղաքացիքս յետին թշուառութեան են-
թարկուած ենք, գաւառացիները ո՞վ
պիտի հոգայ և արդեօք ո՞ր պիտի յան-
գի տեղւոյս ազգայնոց վիճակը, կաղա-
չեմք գոնէ անգամ մը նկատողութեան
առնելով՝ ողորմեցէք ձեր հայրական գը-
թասիրութեամբք:

Թէ գաւառացի և թէ քաղաքացի
ազգայնոց յոյսն ու ակնկալութիւնը՝ Ձեր
շնորհիւ, նորին սրբազնութեան վրայ է:
մինչև նա չվերադառնայ, անկարելի է
բարեկարգութիւն, որ ներկայս խիստ
հարկաւոր է, և Ժողովուրդը բնաւ հան-
դարտելիք չունի, ինչու որ նորա ազգա-
սիրական ջանքը և խնամքը տեսեր և հա-

մակրութիւնը անոր վրայ դարձեր, ուս-
տի զայն թողուլ և կամ փոխանակելն
խիստ դժուար և դրեթէ մեծ զրկանք,
վասն զի ամենքնիս գոհ եմք նորին սրբ-
ազնութեան անձնուէր հովուութենէն և
նորա յամենալովն՝ Ժողովուրդէն է որ
յուսահատելով և է որ համադրամբ յօ-
տար փարախ երես դարձնել հակամիտ է:
Խեղճ է աղղը, զթաղէք:

Թէ և ամեն մէկ անհատի աշխար-
հէս մեկնելու ժամն անձանթ է, բայց
Յիսուսի Քրիստոսի Տեառն մերոյ Ս. Ծը-
նունդն մօտ է, գոնէ նոյն առթիւ մի-
ութեամբ հոգեւոր հաղորդակցութենէ
չզրկուինք, և ի սէր մարդացելոյն Յիսու-
սի այս Ս. Զատիկիս ուրախացուցէք ըղ-
թշուառ Ժողովուրդս, զրպարտիչներու
անհիմն խօսքերուն կարեւորութիւն չտա-
լով՝ վերադարձուցէք զքաջ հովիւն մեր,
զԳեր. Տ. Փիլիպպոս արքեպիսկոպոս Սրբ-
ազան Հայրն առ մեզ, որ ի շնորհս ձերդ-
Ամենապատուութեան հոգեւորապէս և
մարմնաւորապէս մխիթարուինք:

Եթէ զմեզ Հայաստանեայց Ս. Եկե-
ղեցոյ զաւակ, Հայոց ազգի անհատ և
ձեզ անարժան որդի կընդունիք, կա-
ղաչենք, ողորմեցէք մեզ, եթէ ոչ՝ մի ան-
գամ ընդ միշտ մերժեցէք, որպէս զի ալ
չըյօգնիմք հեռագրերու, հանրագրերու
և անօգուտ տեղը ստակ վատնելու, ալ
բաւական է վատնուինք հոգւով մարմ-
նով պատուով և ստակով:

Այսքանս ծանուցեալ մնամք մեր ծա-
ռայական խնդրանաց գործադրութեանը
և Բարձր հրամաննուդ ակնդէտ:

Հայազգի բնակիչք Տիգրանակերտի
ծառայք ձեր

Ստորագրութիւնք

(Հինգ հարիւր էւստ)

27 հոկտ. 1879

ի Տիգրանակերտ

(Յետ ընթերցման)

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Փիլիսոփայութեան պիտակապետի պաշտօնանկութիւնը վճռողն այս ժողովն է, ի՞նչ հարկ սուրբն այդ խնդիրը հոս բերելու :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս կրկին զրեւէն զատ կայ երրորդ մ'ալ, որ Իրաւասութեան ղիւանի կողմէ ուղղուած է եւ ահաւասիկ :

Վսեմափայլ Ատենապետ Էֆէնտի
Ազգային Ժողովոյ

Տիգրանակերտի դադարեալ առաջնորդ Փիլիսոփայութեան Եպիսկոպոսի խնդրոյն համար՝ Դիւանս թէ եւ բաւական ժամանակէ հետէ վարչութեան դիմած է հարկ եղած տեղեկութիւններն ուղղելու, սակայն այդ տեղեկութեանց հիմ' բռնուելիք գրութեանց թիւը խիստ ստուար՝ հետեւաբար եւ անոնց ամփոփումն, ինչպէս նաեւ այդ մասին տրուելիք բացատրութիւններն երկար ժամանակի դործ ըլլալով՝ անհնար եղած է պահանջուած տեղեկութիւններն ստանալ մինչեւ ցայսօր, ուստի եւ Դիւանս՝ ցաւօք սրտի կստիպուի սոյն պատճառները ժողովոյդ ներկայացնելով բացատրել թէ ինչո՞ւ անկարող գտնուած է ցարդ՝ իրեն յանձնարարեալ սոյն խնդրոյն նախաքննութիւնը կատարելու, սակայն վստահ է թէ վերոյիշեալ տեղեկութիւնք վաղ ընդ փոյթ իրեն պիտի հաղորդուին, որով եւ ինք կարող պիտի ըլլայ յառաջիկայ նիստին հասցնել իւր տեղեկագիրը :

Մնամբ խորին յարգանքօք

Ի դիմաց Իրաւասութեան ղիւանի

Ատենապետ

Ա. Արքուհ Տիգրի

13 Դեկտեմբեր 1879

Ղալաթիա

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք թէ՞ Իրաւասութեան ղիւանն ի՞նչ պատճառաւ չէ կրցեր ցարդ մատուցանել իւր տեղեկագիրը սոյն խնդրոյն վրայ, զոր կը խոստանայ սակայն յառաջիկայ նիստին բերել : Կը յուսամ որ ինչպէս անցեալ նիստին մէջ փոյթ տարիք կանոնաւոր վիճարանութեամբ եւ հանգարտութեամբ սոյն խնդրոյն լուծմանը հասնիլ, միեւնոյն տրամադրութեամբ ուղարկութեան կառնուք Իրաւասութեան ղիւանին կողմէ եղած յայտարարութիւնն :

ԷՆՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Խնդիր մը կայ հոս եկած, սակայն Իրաւասութեան ղիւանը հանգոյց մ'անցուցած է անոր, որով ժողովն անկարող կը գտնուի ելք տալ խնդրոյն : Իրաւասութեան ղիւանը պէտք է որ անցեալ նիստին մատուցանէր իւր տեղեկագիրը, բայց չը բերաւ, այսօր ալ տեղեկագիր բերելու տեղ տեղեկութիւն կը հազորդէ թէ՞ ինչ պատճառաւ ցարդ երկարաձգած է, ի՞նչ պիտի ընէ սուրբն ժողովն այս վիճակին մէջ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ձեր դիտողութիւնը կըմբռնեմ, բայց ինչ կառաջարկէք, չեմ հասկնար, ուստի չնորհ ըրէք որոշ կերպով կարծիք մը յայտնել եւ եղրակացնել թէ ինչ պէտք է ընել :

ԷՆՔՍԷՐՃԵԱՆ Տ. ԷՖ. — Այս խնդրոյն նկատմամբ շարունակ հեռադրեր եւ հանրագրեր կը տեղան : գաւառ մ'ողջոյն վեր ի վայր կը յուղուի, եւ ամեն երեւոյթ կը հաստատէ որ խնդիրն ծանրակշիռ կերպարան մ'առած է, եւ ստիպողաբար լուծում կը պահանջէ : Այս վիճակին մէջ Իրաւասութեան ղիւանին տեղեկագիրն յապաղումը զարմանալի է, ուստի դժգոհութիւն կը յայտնեմ անոր ընթացքին դէմ, եւ կեղրակացնեմ թէ՞ պէտք է՝ առանց այլ եւս անոր տեղեկագիրն սպասելու՝ վերջացնել խնդիրը :

ՊԼՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Ես քանի մը Դիւաններու մասին դիտողութիւն պիտի ընեմ, ստէպ կարեւոր խնդիրներ կը յանձնուին իրենց, սակայն հակառակ այդ խնդրոց ստիպողականութեան՝ կուշանան իրենց տեղեկագիրը ներկայելու, թէ եւ Դիւանաց անդամներն անծանօթ չեն այդ խնդիրներուն, եւ պատճառ մը չկայ, որ այս անվերջ երկարաձգումներն արդարացնէ : Շատ աղէկ կը յիշեմ որ ասկէ քանի մը նիստ առաջ երբ Խարբերդի երեսփոխանական ընտրութեան, խնդիրն որ չգիտեմ որքան ատենէ ի վեր Նախաձեռնութեան ղիւանին քննութեան յղուած է, ժողովին մէջ յուղուիլ կսկսէր, նոյն Դիւանի Ատենապետ Էֆէնտին կը յայտարարէր թէ տեղեկագիրը պատրաստ էր, բայց օղին խտութեան պատճառաւ չէր կրցեր մեծ կղզի՝ իւր տունն երթալ բերել եւ թէ զայն ընդ հուպ պիտի ներկայացնէր : Նախաձեռնութեան ղիւանի Ատենապետին այս յայտարարութենէն ետեւ՝ քանի մը նիստեր անցան, հարաւային հողմերը՝ ձմեռնային բռնաչունչ քամիներու փոխուեցան, սակայն սպասուած տեղեկագիրը չեկաւ ցարդ : Դիւաններու այս անշարժութեան առջեւ ի՞նչպէս կրնայ այս ժողովը խնդիրները ամօրինել : պէտք է որ Դիւանները կատարեն իրենց պարտաւորութիւնն, զոր ոտանձնած են եւ յարգեն ժողովին յանձնարարութիւնները :

ՄԵՐԵՒՄ-ԴՈՒԼԻ Յ. ԷՖ. — (Ատենապետ Նախաձեռնութեան ղիւանի) Ատենաբան Էֆէնտին Նախաձեռնութեան ղիւանի ատենապետին դէմ ակնարկութիւն մ'ըրաւ, իւր ակնարկած անձն ես եմ, եւ եթէ ամբաստանութիւն մ'ըլլար իւր ըրածը, սիրով կուղէի դատուիլ : Առայժմ կուղեմ միայն իւր յիշած պարագային վրայ բացատրութիւն մը տալ եւ եղելութիւնը ճշդել : Ժողովին Ժ. Նիստին մէջ՝ յայտարարեցի թէ Նախաձեռնութեան ղիւանի տեղեկագիրը պատրաստ էր, սակայն օղին խտութեան պատճառաւ ընակարանս երթալու արգիլուելով չէի կրցած ըբերել, այս յայտարարութենէն ետեւ բնականաբար կը պարտաւորէի յաջորդ նիստին ներկայացնել զայն ժողովին :

Վին : Նոյն նիստէն ետեւ մինչեւ ցարդ երկու գումարում տեղի ունեցաւ, անցեալ անգամ արդէն բնաւ չկրցի ժողովի զալ անձնական տկարութեան պատճառաւ, եւ հետեւաբար տեղեկագիրը ներկայացնել, իսկ այսօր որ Ժողովին կը ներկայանամ, տեղեկագիրը բերած եմ մէկ տեղ, հետեւաբար միայն մէկ նիստի միջոց յետաձգուած է, եւ ոչ աւելի : Իրաց այս վիճակին առջեւ եթէ յանցանք մը կրնայ վերադրուիլ ինձ, շատ շատ այն է թէ ինչո՞ւ բացակայութեանս պարագային մէջ տեղեկագիրը չեմ յուղարկեր, եւ անձամբ զայն կը բերեմ մատուցանել : Ահաւասիկ այս է իրողութիւնը հետեւաբար Պէրպէրեան Էֆէնտիի դիտողութենէն գործնական հետեւանք մը չեմնէր :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Նախ Մէրեւէմ-Գուլի Էֆէնտիի խօսքին սա պատասխանը կուտամ որ եթէ այսօր պատրաստ էր տեղեկագիրը, պէտք էր մինչեւ ցարդ աւանդած ըլլար Մայր ղիւանին, որպէս զի ժողովը կարենար նկատողութեան առնուլ զայն : Ի՞նչ օգուտ ունի տեղեկագիրը պահել եւ պատրաստ է ըսել, միթէ այս կերպով զայն ժողովին յանձնած կրնա՞յ համարուիլ :

Իսկ զալով Իրաւասութեան ղիւանի կողմէ եկած տեղեկագիրն՝ ընդհանուր օրէն է որ երբ խնդիր մ'օրակարգն կընդունուի, եւ նկատողութեան առնուելով վիճարանութեան կենթարկուի, այլ եւս նոյն խնդիրն չկրնար ետ դառնալ : Ձարմանալի է որ Տիգրանակերտի խնդիրը Յարաբերութեան ղիւանին կը յանձնուի նախ, եւ անոր տեղեկագիրն վրայ վիճարանութիւնը բացուելէ ետեւ՝ երկրորդ անգամ ուրիշ Դիւանի մը, այն է Իրաւասութեան ղիւանին յղել կորոշուի, որու տեղեկագիրն ընդ երկար յապաղելով կը պարտաւորի ժողովը խնդիրը նկատողութեան առնուլ, եւ երբ վիճարանութիւնը կսկսի, ահաւասիկ Իրաւասութեան ղիւանը այս միջոցիս կեննէ կը յայտարարէ թէ տեղեկագիրը պիտի բերէ, եւ Մայր ղիւանն ալ նորէն խնդիրը առ կախել տալու կը ձգտի : Բայց կրնա՞յ մեղի Եւրոպական ազգաց խորհրդարաններուն մէջ այսպիսի ե-

ղեկութեան մ'օրինակը ցոյց տալ : Եւ քանի որ խնդիրն այսպէս իւր դոյնը կը փոխէ, միշտ նորանոր դարձումներ կատանայ, բնականաբար կասկած կը ծագի մարդուն մաքին մէջ թէ այս ամենուն ներքեւ նպատակ մը կայ : Այս խօսքերն ընելով ես ոչ զոր կուզեմ ամբաստանել, միայն ձեր ուշադրութիւնը կը հրաւիրեմ սա կէտին վրայ թէ խնդիրը քանի որ վիճաբանութեան ենթարկուած է, օրինաւոր չէ զայն յետաձգել, Դիւանի մը քննութեան սպասելու համար : Եթէ Ազգ. ժողովը կուզէ որ իրեն ստորակարգեալ ժողովներն օրինաւորութեամբ ընթանան, պէտք է որ օրինապահութեան առաջին օրինակն ինք տայ անոնց : Իրաւասութեան դիւանն եթէ տեղեկագիր տալ կուզէր իւր ձեռքը բռնող չը կար, եւ մինչեւ ցարդ զայն պէտք էր բերած լինէր : Երբ Տիգրանակերտի վիճակը այս խնդրոյն պատճառաւ վեր ի վայր կը յուզի, միթէ չի պիտի կրնանք մենք տնօրէնութիւն մ'ընել, եւ պարտաւոր պիտի լինինք այսքան երկար յապաղումներէ ետեւ, տակաւին սպասելու որ Իրաւասութեան դիւանը իւր տեղեկագիրը մատուցանել բարեհաճի : Եւ ինչո՞ւ խնդիր մը նախաքննութեան կը յղուի, անոր ելք մը տալու համար :

Բայց Տիգրանակերտի խնդիրն արդէն բաւականէն աւելի ուսումնասիրուած եւ լուստրանուած խնդիր մ'է, ամեն ոք գիտէ թէ դատաստան եւ քննութիւն պէտք է, որով կըրնայ խնդիրը վերջանալ : Իրաւասութեան դիւանը զայդ ընդունի կամ ոչ, խնդրոյն քննութիւնն արդէն կը պահանջէ զայն : Արդ՝ եղբակացներով խօսքս կըսեմ թէ քանի որ խնդրոյն ստիպողութիւնը ժողովին կողմէ ընդունուած եւ արդէն վիճաբանութիւնն սկսուած է, պէտք է շարունակել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանին նկատմամբ ամբաստանական ակնարկութիւն մ'ըրաւ Ատենաբան Էֆէնտին, յայտարարելով միանգամայն թէ ոչ զոր ամբաստանել էր իւր գիտաւորութիւնը : Այս մասին պէտք է պատասխանեմ իրեն :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ամբաստանութիւն չըրի ոչ Դիւանին եւ ոչ ուրիշի դէմ, այլ եղբակներ յիշատակեցի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Քանի որ Ատենաբան Էֆէնտին կը կրկնէ թէ ամբաստանութիւն չէ ըրած ինք, Դիւանը բաւական կը համարի այս բացատրութիւնն եւ չուզեր ծանրանայ այս կէտին վրայ : Բայց Ատենաբան Էֆէնտին օրինաւորութեան խնդիր մ'ալ կը յուզէ, եւ կառարկէ թէ ժողովը չկրնար խնդրոյ մը վիճաբանութիւնն սկսելէ ետեւ՝ դոյն ընդհատել, եւ կը հարցնէ թէ կա՞յ Եւրոպական ազգաց խորհրդարաններուն մէջ այս տեսակ ընթացքի մ'օրինակ :

Այս մասին կապահովեմ Ատենաբան Էֆէնտին որ ինչ որ օրինաւորութեան հակառակ կը համարի ինք, ընդհակառակն շատ օրինաւոր է, եւ բանաւոր, եւ Եւրոպական խորհրդարաններու մէջ յաճախ սպասած իրողութիւն մը : Ազգային ժողովն ինքն է իւր խնդիրներուն տէրն, որ եւ է խնդրոյ վրայ վիճաբանութիւն սկսելէ ետեւ՝ կրնայ շարունակութիւնը ընդհատել, յաջորդ նիստին վերապահել, եւ եթէ հարկ դատի մինչեւ իսկ աւելի յետաձգել, խնդիրը նախաքննութեան յանձնել, կատարուած քննութիւն մը անբաւական համարելով՝ կրկին քննութիւն յանձնարարել : այս ամենն կարող է ընել Ազգ. ժողովն, առանց ապօրինաւորութեան մէջ իյնալու : Ահաւասիկ այս է Քափամաճեան Էֆէնտիի գիտողութեան պատասխանն :

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Խօսք խնդրեցի պատասխանելու համար այն գիտողութեան, զոր պահ մ'առաջ ըրաւ Քափամաճեան Էֆէնտին Նախաձեռնութեան դիւանի տեղեկագրին նկատմամբ : Եթէ այսքան մեղադրանաց արժանի կը կարծեն Նախաձեռնութեան դիւանն, պէտք է որ բացարձակապէս ամբաստանեն զայն, եւ պիտի համոզուին այն ատեն թէ որքան կը սխալին : Ես յայտարարեցի սլահ մ'առաջ թէ Խարբերդի երեսփոխանական ընտրութեան խնդրոյն տեղեկագիրը բերած եմ, բայց թէ ինչո՞ւ չեմ յանձնվող

ցարդ Մայր դիւանին, խնդիր կընէ Քափամաճեան Էֆէնտին, եւ ծանր ակնարկութիւններ կընէ : Ի հարկէ երբ յայտարարեցի թէ տեղեկագիրը եկած է, ըսել է պիտի անցնի այսօրեայնստի ատենագրութեան մէջ : Թերեւս Նախաձեռնութեան դիւանի անդամներէն միոյն զայստեան կսպասեմ, որ պիտի ստորագրէ զայն, եւ այս պատճառաւ քիչ մ'ետեւ պիտի կարենամ աւանդել Դիւանին : Վերջապէս ցուալի է որ այսպիսի անկարեւոր գիտողութիւններով ժողովը ժամաւաճառ կընեն :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրը բնաւ անձնականութեան հետ վերաբերութիւն չունի, եւ պէտք չէ որ այդպիսի հանգամանք մ'ընծայուի : Գիտողութեանց նպատակը՝ տեղեկագրին փութացումն է, եւ անշուշտ այս ալ փափաքելի է ամենուն : Սակայն ոչ նուազ փափաքելի էր, որ յապաղմանց դէմ գիտողութիւն ընդունեն նախաքննիչ Դիւանաց անդամակցէին, եւ փորձով տեսնէին թէ շատ անգամ ինչ արգելքներով պիտի պաշարուէին :

ԱՅՆԵՐԻ. — Շնորհակալ ենք Նախաձեռնութեան դիւանէն :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ազգային ժողովն իւր նոյնմբեր 20 ի նիստին մէջ Տիգրանակերտի խնդրոյն ստիպողութիւն ընծայեց, եւ առանց սպասելու Իրաւասութեան դիւանի տեղեկագրին վիճաբանութիւնն սկսաւ, զոր պիտի շարունակէ այսօր : Ստոյգ է որ Իրաւասութեան դիւանն ինչպէս կը յիշատակէ իւր գրոյն մէջ, ինձ դիմած էր, իրեւ նախորդ Պատրիարքական Փոխանորդի, որու պաշտօնավարութեան ժամանակ տեղի ունեցաւ Փիլիպպոս եպիսկոպոսի անկումն, եւ տեղեկութիւն խնդրած էր սոյն խնդրոյն նկատմամբ, այս տեղեկութիւնները մատակարարելու համար իրեն Պատրիարքարանի Դիւանատունէն խնդրեցի սոյն խնդրոյն վերաբերեալ բոլոր թղթերն : Դիւանատունը փութաջանութեամբ հոգ տարաւ այս բազմաթիւ գրերն ամփոփելու, եւ ինձ ղրկելու : Ահաւասիկ այս թղթերն որ 70 կտորէն աւելի են :

Արդ՝ ես պատրաստ եմ, իմ համարս տալու Ազգ. ժողովոյդ, Տիգրանակերտի խնդրոյն նկատմամբ, եթէ հաճիք ինձ լսել :

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Եթէ Մատթէոս Սըրբազանին ներկայացուցած այս բազմաթիւ գրութիւններն ամբողջապէս տեսնել հարկ ըլլայ, ոչ այս եւ ոչ իսկ յառաջիկայ նիստը կը բաւէ անոնց ընթերցումը լսելու համար, եւ այս կերպով դժուար կը լինի մեզ եղբակացութեան մը հանկ, եւ խնդրոյն լուծում մը տալ : Ուստի կ'առաջարկեմ յանձնել այս գրերն Իրաւասութեան դիւանին որ աչքէ անցնէ, ամփոփէ, եւ անոնց մէկ քաղուածոյն պատրաստէ, որ Ատենագրութեան մէջ տրպուելով, հաղորդուի Երեսփոխանաց, որ կարողով զայն, ուսումնասիրեն խնդիրն եւ պատրաստուին յառաջիկայ նստին իրենց կարծիքն յայտնելու :

ՉՕՊԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Տիգրանակերտէն հասած հեռագրերն եւ հանրագրերն տեսնելով դիտել կուտամ ժողովոյդ որ խնդիրը ստիպողականութիւն գտած է, եւ չկրնար երկարաձգուի :

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Արդէն խնդիրն վիճաբանութիւն չ'վերցնել : Նախորդ նստին մէջ ժողովս որոշեց որ, առանց Իրաւասութեան դիւանին տեղեկագրին սպասելու, անմիջական վիճաբանութեան ենթարկէ Տիգրանակերտի խնդիրն եւ թէպէտ նստին վերջերն Ատենապետ Էֆէնտին խնդիր յարոյց թէ ապօրինաւոր էր այսպէս վիճաբանիլ առանց Նախաքննիչ դիւանի տեղեկագրի մը հիմն ստանալու, բայց այս միջանկեալ խնդիրն որոշման մը չ'յանդելով ատենը վերցուեցաւ : Արդ հիմայ կը շարունակեմք նախորդ նիստն, եւ կը կարծեմ թէ ետ դառնալու բնաւ իրաւունք մը չ'կայ, ժողովը որոշեց նկատողութեան առնուլ Փիլիպպոս եպիսկոպոսի դործն, եւ սկսաւ վիճաբանութիւնն, կատարուած իրողութիւն մ'է այս, ուստի կը մնայ մեզ շարունակել

խնդրոյն քննութիւնն եւ ժամաւաճառ չլինի, աւելորդ վէճերով :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Դիւանն իրաւունք չունի Երեսփոխանաց կողմէ այս կամ այն խնդրոյ վրայ յայտնուած կարծիքները հերքելու, կամ հաստատելու, եւ խնդիրներու վիճաբանութեան մասնակցելու : Բայց երբ ժողովին ատենական ընթացից վրայ է խնդիրն, եւ օրինաւորութեան եւ իրաւանց կէտեր կը յիշուին, Դիւանին պարտքն է պէտք եղած բացատրութիւնը տալ որ մի գուցէ թիւրիմացութեամբ չփոթութիւններ տեղի ունենան : Բարեկամս, Պէրպէրեան էֆէնտին կը կարծէ թէ պէտք է խնդրոյն վիճաբանութիւնը շարունակել, առանց Երեսփոխանի գիւտնի տեղեկագրին սպասելու : այս իւր կարծիքն է, որու դէմ Դիւանն առարկութիւն ընելու իրաւունք չունի, բայց երբ Պէրպէրեան էֆէնտին կը մտածէ թէ ժողովն նախորդ նիստին մէջ որոշած ըլլալով խնդիրն անվիճական վիճաբանութեան ենթարկել, այլ եւս իրաւունք չունի ետ դառնալու, եւ թէ քննութիւնը շարունակելու պարտաւոր է, կը սխալի : Ժողովը միշտ իւր որոշման տէրն է, եւ կրնայ փոփոխել, երբ հարկ տեսնէ, արդ՝ երբ Երեսփոխանի գիւտնը կը խոստանայ իւր տեղեկագիրը յառաջիկայ նիստին բերել, եւ Վարչութիւնը կը յայտարարէ թէ բացատրութիւններ ունի, չկայ որ եւ է պատճառ որ արգելու գինքը խնդիրը յետաձգելու, եւ պարտաւորէ իւր որոշման վրայ անշարժ մնալով՝ անպատճառ վիճաբանութիւնը շարունակելու :

ՃԱՅՃԱՅԵԱՆ Մ. ԷՖ.— Եթէ քաղաքական կամ ուրիշ գլխաւոր պատճառ մը չկայ որ փլիպպոս եպիսկոպոսի ի Տիգրանակերտ վերադարձն արգելու, կառաջարկեմ առանց երկար քննութեանց մտնելու, եւ ժողովին նիստերը զոհելու զայն իւր վիճակն յուղարկել, որպէս զի Վարչական խնդիրներ չծագին, մանաւանդ որ ժողովուրդն իւր առաջնորդը կ'ուզէ : Իսկ եթէ անոր վերադարձը վնասակար կը համարուի վիճակին, այս մասին Սրբազան Պատրիարք Հօր կարծիքն

առնելով պէտք է տեղացի ժողովուրդը համոզել որ իւր պահանջումէն ետ կենայ, իսկ եթէ կարելի չլինի համոզել, դարձեալ պէտք է Վարչութեան կարծիքը հարցնել, թէ կըրնա՞յ ըստ օրինի առաջնորդն յուղարկուի իւր վիճակն : Եթէ Վարչութիւնը վերստին յարմար չգտաի, այն ատեն պէտք է մանրամասն քննութեանց ձեռնարկել :

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ.— Պահ մ'առաջ իմ ըրած յայտարարութեանս վրայ՝ Շահպաղ էֆէնտին առաջարկեց որ այս խնդրոյն վերաբերեալ թղթերը, զորս ներկայեցի ձեզ, յղուին Երեսփոխանի գիւտնին որ անոնց մէկ ամիսիւմն ընէ, եւ ժողովին ներկայացնէ : Իսկ ես կըսեմ թէ խնդիրը ծանրակշիռ է, եւ ժողովն անոր ամէն կէտերուն եւ դարձեալ մտք վրայ կատարեալ եւ ճշգրիտ դադար մ'ստանալու համար պէտք է որ այս գրեթե ամբողջապէս կարգայ, նախորդ նիստի ատենագրութիւնը՝ թէ եւ անվաւեր՝ աչքէ անցնելով տեսայ որ այս խնդրոյն նրկատմամբ այնպիսի տեղեկութիւններ հաղորդուած են, որ թէ եւ սուտ չեն, բայց սըխալներ կը պարունակեն, զանազան ուղղելու եւ իրաց բուն վիճակը երեւան հանելու համար, կը կրկնեմ, այս գրութիւնները պէտք է կարգացուին :

ԶԱՅՆԵՐ.— Թո՛ղ տպուին :

ԷՆՔՍԵՐՃԵԱՆ Տ. ԷՖ.— Ենթադրենք վայրկեան մ'որ կարգաւոր այս գրութիւններն մի առ մի, ստանալով նաեւ Երեսփոխանի Դիւանին տեղեկագիրն, տեսանք որ փլիպպոս եպիսկոպոս յանցաւարտ դատուած է, բայց երբ կը տեսնենք միւս կողմէ որ ժողովուրդը հեռագրեր եւ հանրագրեր տեղալով Առաջնորդին վերադարձը կը պահանջէ անպատճառ, այս պարագային մէջ ի՞նչ պիտի ընենք :

ԶԱՅՆԵՐ.— Վարչութեան գիտնալիք բանն է այդ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Ներեցէք ինձ ըսել

որ այս ընթացքով ոչ այսօր ոչ ուրիշ նիստի չի պիտի կրնանք մենք խնդրոյն մէջէն ելնել : Լսեցիք որ Երեսփոխանի գիւտնը կը խոստանայ իւր քննութեան տեղեկագիրը բերել յառաջիկայ նիստին, միւս կողմէ լսեցիք նաեւ որ Վարչութիւնն ալ այս խնդրոյն նկատմամբ իւր համարը ներկայացնել կ'ուզէ, ըսէք ուրեմն որոշակի ձեր կարծիքը թէ՛ պէ՞տք է այդ տեղեկագրին, եւ Վարչութեան բացատրութեան սպասել՝ թէ ոչ :

ԷՆՔՍԵՐՃԵԱՆ Տ. ԷՖ.— Եթէ տաան եւ հինգ օր եւս երկարաձգենք խնդիրն, բոցն աւելի պիտի արծարծի, եւ ոգիտէ ուր յանդի հետեւանք : Իմ կարծիքս այն է որ մէկ կողմէ քննութիւնն սկսինք, եւ միւս կողմէ եթէ կարելի է առաջնորդը վերադարձնենք իւր վիճակը, իսկ եթէ կարելի չէ այսպէս ընել, Տեղապահ մը ղրկենք հոն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ.— Այդ ամէնը Վարչութեան գիտնալիք բաներն են :

ՄԱԳՊՈՒԼԵԱՆ Հ. ԷՖ.— Ես կուզէի գիտնալ թէ ինչ հիման վրայ պիտի վիճաբանինք, քանի որ տեղեկագիր մը չկայ մեր առջեւ, փլիպպոս եպիսկոպոս ինք բողոքած է Վարչութեան դէմ, եւ պէտք է իւր բողոքը քննենք, Վարչութեան՝ բացատրութիւնները լւսնելով, բայց որպէս զի ցաւարտ այս քննութեան առաջնորդական վիճակը թափուր չը մնայ, Տեղապահ մ'անուանելու է :

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ.— Երեք Երեսփոխանք խնդրոյն ստիպողութիւնը յիշեցնելով՝ առաջարկեցին այսօր վերջ մը տալ անոր : Բայց խնդրոյ մ'ստիպողութիւնն ընծայելն առանց քննութեան որոշում տալ չենթադրեր, եւ ի՞նչպէս կարելի է որ եւ է որոշում մ'ընել, երբ մեր ձեռքը տեղեկագիր մը չկայ : Արդ քանի որ Երեսփոխանի գիւտնն այս խնդրոյն քննութեամբը կղբաղի ժողովին յանձնարարութեամբը, պէտք է անոր տեղեկագրին գալուն սպասել, բայց միւս կողմէ Տիգրանակերտի վիճակն ալ անհովիւ եւ անխնամ պէտք

չէ թողուլ, ինչպէս ղիտեց Մաքսուլեան էֆէնտին, եւ այս մասին հարկ է անօրէնութիւն մ'ընել : Կը յիշէք որ ասկէ առաջ Տիգրանակերտէն Պաքալեան ստորագրութեամբ հեռագիր մ'եկած էր, որ փլիպպոս եպիսկոպոսի վերադարձը կը խնդրէր անհրաժեշտ կերպով, այսօր ալ ուրիշ հեռագիր մը կուգայ Խանտանեան ստորագրութեամբ, որ մի եւ նոյն խնդիրը կը կրկնէ, յարելով սակայն որ եթէ առաջնորդը պիտի չկարենայ յուղարկուի, գէթ տեղապահ մը նշանակուի : Ինչպէս առաջին հեռագիրը նոյնպէս եւ երկրորդը մասնաւոր անձերու կողմէ ստորագրեալ են, եւ իրարու համադր : Ուստի ես կառաջարկեմ այս երկրորդ հեռագրին իմաստին համաձայն՝ Վարչութեան յանձնարարել որ՝ տեղապահ մ'անուանէ եւ յուղարկէ ի Տիգրանակերտ : Իսկ միւս կողմէ մենք սպասելով մեղտուելիք տեղեկութեանց եւ քննութեան տեղեկագրին, քննենք փլիպպոս եպիսկոպոսի խնդիրը իւր ներկայութեան, եւ այնուհետեւ արդարութեամբ տանք մեր վերջնական որոշումը :

ԶԱՅՆԵՐ.— Այո՛, այո՛ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Տեսնուած չէ երբէք որ այսքան պարզ խնդիր մ'այս աստիճան ժողովին ժամերը գրաւէ : Առաջնորդ մը պաշտօնանկ եղեր է եւ բողոք կը բառնայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— (Ընդմիջելով) Խնդրոյն մէջ մի մտնէք, Ատենաբան էֆէնտին, այլ ձեր խօսքն ամիսփեցէք սա կէտին վրայ թէ պէ՞տք է սպասել Երեսփոխանի գիւտնի տեղեկագրին, թէ ոչ :

ԶԱՅՆԵՐ.— Բուէ, բուէ :

ՈՒՐԻՇ ՆՍԱՐԱՆՆԵՐԷ.— Թողէք որ խօսի

(Շուկա)

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ.— Ես ալ այդ կէ-

տին վրայ պիտի խօսիմ, եթէ թոյլ տաք շա-
րունակել: Զէ եղած երբէք կըսեմ, Տիգրանա-
կերտի խնդրոյն պէս դժբաղդ խնդիր մ'որ իւր
պարզութեամբն՝ այսքան ձեւ եւ գոյն փոխէ,
եւ կնճռտի Պաշտօնանկ առաջնորդ մը կը բո-
ղոքէ, եւ դատաստան կը խնդրէ, իւր իրա-
ւունքն է այդ, եւ արդարութիւնն չէ դիմնալ
դայն: Այս դատաստանն եւ քննութիւնն ընե-
լու համար՝ ժողովն անցեալ նիստին՝ ստիպո-
ղութեան քուէ տուաւ, եւ Ատենայեալ է-
ֆէնտին՝ ժողովը հրաւիրեց խնդիրը նկատու-
ղութեան առնելու:

Վիճաբանութիւնն սկսաւ, խնդիրը լու-
սաբանուեցաւ, եւ երբ որոշման պիտի յան-
դէր՝ Դիւանն ելաւ յայտարարեց թէ Իրաւա-
սութեան զիւանին տեղեկագիրն պէտք էր
սպասել. եւ թէ չէր կրնար որոշում տրուիլ:
Բայց քանի որ ժողովն ստիպողութեան քուէ
տուած է, ըսել է այդ տեղեկագիրն հարկ չէ
տեսած, եւ քանի որ վիճաբանութիւնն սկսած
է, պէտք է շարունակէ դայն: Իսկ գալով այն
կէտին՝ թէ փխրապոս եպիսկոպոս իրաւունք
ունի՞ դատաստան պահանջելու, այս իրաւուն-
քը բնաւ տարակոյսի ներքեւ չիյնար, չէ թէ
եպիսկոպոս մ'այլ ժամկոչ մ'անգամ իրաւունք
ունի այս ժողովին դիմելու եւ արդարութիւն
պահանջելու:

Ասկէ քանի մը տարի առաջ երբ Վանայ
Պողոս վարդապետը . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ընդմիջելով) Խնդրէն
կը չեղիք, Ատենաբան էֆէնտի, եւ դայն կը
ճապաղէք: Իրաւասութեան զիւանին տեղե-
կագիրն եւ Վարչութեան բացատրութեանց
սպասել պէտք է թէ ոչ, այս կէտն է զոր կը
յուզէ ժողովն, եւ անոր վրայ պէտք է խօսիք:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Այդ ձեր կար-
ծիքն է միայն, վիճաբանութեան ենթար-
կուած խնդիր մ'ետ չդառնար, եւ հարկ է
դայն շարունակել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանին պարտաւո-
րութիւնն է վիճաբանութեան ընթացքն ուղ-
ղել, եւ խնդիրն դէպ ի իւր լուծումն առաջ-

նորդել օրինաւորութեամբ: Տիգրանակերտի
խնդրոյն նկատմամբ երկու առաջարկութիւն
կայ, մինն է շարունակել վիճաբանութիւնն
եւ վերջացնել խնդիրը եւ միւսը սպասել ար-
ուելիք տեղեկութեանց: Կը խնդրեմ որ այս
կէտին վրայ խօսիք:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ժողովն ար-
դէն խնդրոյն ստիպողականութիւնն եւ նկա-
տառումն քուէարկած եւ վիճաբանութեան
ենթարկած է իւր անցեալ նիստին մէջ. Ե-
րեսիոսանք արդէն իրենց կարծիքը յայտնած
են թէ ինչ ընթացք պէտք է բռնել, եւ զը-
րով աւանդած են Դիւանին իրենց առաջար-
կութիւններն, բայց գուր հիմա, Ատենայեալ
էֆէնտի, բոլորովին նոր խնդիր մը կը յա-
րուցանէք:

ՄԷԼԻՔԵԱՆ Մ. ԷՖ. — Ես ալ իբր Ա-
տենադպիր կը վկայեմ թէ ստոյգ է ինչ որ
Քափամաճեան էֆէնտի խօսեցաւ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Պէտք է իրարու խօսք
հասկնանք, նախորդ նիստին մէջ ժողովն ո-
րոշեց նկատողութեան առնուլ խնդիրը առանց
սպասելու Իրաւասութեան զիւանին տեղե-
կագիրն, բայց այսօր թէ Իրաւասութեան զի-
ւանին եւ թէ Վարչութեան կողմէ այնպի-
սի յայտարարութիւններ տեղի ունեցան որ սա
խնդիրն երեւան եկաւ թէ պէտք է սպա-
սել անոնց տալիք տեղեկութեանց, թէ ոչ
խնդրոյն վիճաբանութիւնը շարունակել:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Եթէ այսպէս
ժողովին որոշումները մէկ նիստէն միւսը փո-
փոխութիւն կրեն, ես ալ ուրիշ անգամ մը
կրնամ կուսակցութիւն մը կազմելով՝ նկատու-
ղութեան եւ վիճաբանութեան ենթարկուած
խնդրոյ մ'ընթացքը կեցնել, կամ ժողովոյ ո-
րոշումը յեղաշրջել, եւ դիւրին է գուշակել
թէ ասոր հետեւանքը որքան վնասակար կը
լինի: Ուստի, կը կրկնեմ, թէ պէտք է վիճա-
բանութիւնը շարունակել, այս է իմ պահան-
ջումս:

ՕՏԵԱՆ Ն. ԷՖ. — Յանուն Իրաւասութեան
զիւանին երկու խօսք ունիմ. անոր դէմ ալ-
նարկութիւններ եղան որպէս թէ իւր քըն-
նութեան տեղեկագիրն յապաղած ըլլայ, չեմ
ընդունիր այս ակնարկութիւններն: Իրաւա-
սութեան զիւանը թէ եւ քանիցս գումար-
ուեցաւ, բայց իւր պաշտօնը կատարելու հա-
մար պէտք ունէր այն թղթերուն, զորս Մատ-
թէոս Սրբազան ներկայացուց ձեզ պահ մ'ա-
ռաջ: Այդ թղթերը Դիւանին յանձնելու հա-
մար՝ Նոյեմբեր 28 ին նամակ գրուեցաւ Մատ-
թէոս Սրբազանին, եւ հազիւ կրցեր է ցարդ
ամբողջանալ անոնց հաւաքումը. բայց հիմա
որ պատրաստ է, Դիւանը կրնայ իւր քըն-
նութիւնը կատարել:

Տ. ՄԱՏԹԷՈՍ ԵՊՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Ի-
րաւասութեան զիւանին Նոյեմբեր 28 ամսու-
թեան ալ իս ուղղած նամակը գեղեցիկեմք 1 ին
ստացայ եւ փութացի անմիջապէս Պատրիար-
քարանի զիւանատունէն Տիգրանակերտի խնդ-
րոյն վերաբերեալ թղթերը խնդրել, որպէս զի
փութամ ինձմէ պահանջուած տեղեկութիւն-
ները ներկայել Իրաւասութեան զիւանին:
Դիւանատան պաշտօնեայք, ինչպէս արդէն
յայտարարեցի, փութաջանութեամբ հասուցին
ինձ գանոնք, եւ մինչեւ երէկ երեկոյ հազիւ
ուրեմն կրցի կարգաւորել: Ուստի կրնամ այլ
եւս Տիգրանակերտի խնդրոյն վրայ հարկ եղած
տեղեկագիրը մատուցանել Իրաւասութեան
զիւանին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Իբրեւ Ատենադպիր
պարտաւոր եմ յայտարարել թէ ժողովը իւր
վերջին նիստին մէջ քուէարկութեամբ որոշեց
Տիգրանակերտի խնդրոյն վիճաբանութիւնն ըս-
կիլ առանց Իրաւասութեան զիւանի տե-
ղեկագիրն սպասելու: Ատենադպրութիւնն՝ որ
հրատարակեալ է եւ զոր զիւանի անդամք ըս-
տորադրած են, ըսածս կը հաստատէ: Ես կը
ցաւիմ որ այսպիսի ջնջին կէտի մը վրայ ժա-
մերով կը վիճաբանինք առանց բուն խնդրոյն
վրայ խօսելու, մինչդեռ ժողովուրդը անդին
յուսահատութեան մատնուած է: Վասն որոյ

կառաջարկեմ յարգել ժողովոյ նախորդ որո-
շումն եւ բուն խնդրոյն անցնիլ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երբ խնդիր մ'իւր
բնական ընթացքէն դուրս՝ մանուածոյ ճամ-
բու մէջ դուրս, այսպէս կը դժուարանայ ա-
նոր ելքն, այսպէս կը յետաձգի անոր լուծու-
մը, զոր երազել էր իրենց նպատակը: Նա-
խընթաց նիստին մէջ երբ անհամբերութեան
նշաններ ցոյց կը տրուէին Իրաւասութեան զի-
ւանին տեղեկագիրն սպասելու համար, յայ-
տարարեցի արդէն թէ այդ Դիւանը գումարում-
ներ կընէր, եւ Տիգրանակերտի խնդրոյն վե-
րաբերեալ գրութիւնները ձեռք բերելու հետա-
մուտ էր: Նոյն պահուն ձայն մ'ընդմիջեց խօսքս
ըսելով թէ Իրաւասութեան զիւանի անդամոյ
միոյն կողմէ լսած է որ այդ տեղեկագիրը դա-
ւիք չունի. այս ընդմիջող ձայնն Այվաղեան
էֆէնտիինն էր, եթէ չեմ սխալիր:

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — Ես Այվաղեան Տիգրի
էֆէնտիէն իմացայ, որ Տիգրանակերտի դէպ-
քերու տեղեկագիրը կայ, բայց պատճառե-
րունը չկայ, ասոր համար ըսի նոյն օրը թէ
տեղեկագիր գալիք չունի:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Այս խօսքն եղած
ատեն՝ Դիւանին անդամներէն ոչ ոք ներկայ
էր, Վարչութեան անդամներէն ոչ մին կը
գտնուէր, որ պէտք եղած յայտարարութիւնն
ընէր, եւ մեր շտապող ընկերակիցներն հա-
մողէր որ առանց այդ քննութեան, առանց
Վարչութեան տալիք բացատրութեանց չէր
կրնար խնդիրը լուծուիլ: Զուգեցին վեր-
ջապէս քիչ մը համբերել, եւ վիճաբանու-
թեան ենթարկեցին խնդիրն, որ չկրցաւ ելք
մ'ընդունիլ, ինչպէս բնական էր, եւ մնաց
տարտամ ու առկախ: Իսկ այսօր երբ
Վարչութիւնը կը յայտարարէ թէ իւր ընթաց-
քին վրայ համար պիտի տայ, երբ Իրաւասու-
թեան զիւանն իւր տեղեկագիրը յառաջիկայ
նիստին մատուցանել կը խոստանայ, կարելի
է միթէ ըսել իրենց թէ ձեզ չենք ուղեր լը-
սել, կարելի է՞ միթէ որոշում մ'ընել առանց

տեղեկանալու խնդրոյն էութեան, առանց քննութեան, որ խել մ'իրողութիւններ պիտի պարզէ եւ ի վեր հանէ: Պէտք է իրաւասութեան դիւանին տեղեկագիրը ներկայանայ, այնքէ վարչութեան գրերը ներկայանան, եւ տպեալ, սրպէս զի ամէնքը կարգան զանոնք, ուսումնասիրեն խնդիրն, եւ այնպէս կարենայ խնդիրն իւր լուծումն ընդունիլ: Պէտք է համադուին ֆիլիպպոս եպիսկոպոսի պաշտպաններն թէ այս կերպով կրնայ խնդիրն իւր լուծումը գտնել:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — (Ընդմիջելով) Բառը փոխեցէք, չենք ընդունիր:

ԱՅՎԱԶԵԱՆ Ա. ԷՖ. — Կընդունինք, պաշտպանն ենք անոր:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Շարունակելով) Ինչո՞ւ չընդունինք, միթէ նախատինք կը համարի՞ք զայն պաշտպանել: Եթէ բարենորոգմանց Յանձնախումբը մնացած լինէր, այս խնդրոյն մէջ ընդհանուր դատախազի կերպարան պիտի առնուր ֆիլիպպոս եպիսկոպոսի զէմ: Զո՞ն կանուանեն զայն, բայց ի՞նչ զո՞նց արդեօք նա, ազգն է այս խնդրոյն մէջ զո՞ն ընողը:

(Ընդմիջմունք)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդրեմ սա կէտին վրայ ամփոփեցէք ձեր խօսքը, իրաւասութեան դիւանի տեղեկագիրն սպասել պէ՞տք է թէ ոչ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Ինչպէս կողմէք որ փաստաբանեմ խնդրոյն վրայ, առանց անոր յարակից եղելութիւններ յիշելու, կուզեմ հաստատել թէ սպասել պէտք է, եւ անշուշտ պարագաներ մէջ պիտի բերեմ:

Այս խնդիրն առաջնորդի մ'անձնակա-նին չվերաւերի, այլ ազգին շահուց եւ արժանապատուութեան վերաբերեալ խնդիր մ'է, այո՞, ազգն էր զո՞ն տուողն եւ կրկնակի զո՞ն, նախ՝ բարենորոգմանց խնդիրն չկրցաւ

Տիգրանակերտի մէջ գտնել այն նշանակու-թիւնն, որու արժանի էր, եւ երկրորդ՝ ազգին պատուիրակները՝ խայտառակութեամբ ծեծուեցան: հեռագիրն այս արտաւայ ի-րողութեան լուրն ամեն ուրեք ծաւալեց, որ մինչեւ իսկ Անգղիական խորհրդարանին մէջ արձագանք գտաւ: Երկու եկեղեցականաց անհամաձայնութեամբը այս ելքն ունեցաւ Ազգային խնդիրն ի Տիգրանակերտ: ուրիմն ո՞վ էր յանցաւորն, մի՞նք թէ երկուքն ալ, Եթէ այսօր այս կարեւոր պտրագայն չստուգուի, ապագային ուրիշ գաւառներու ալ չար օրի-նակալիւր ըլլայ: Կեզրակացնեմ խօսքս եւ կը կրկնեմ թէ պէտք է տեսնենք իրաւասութեան դիւանին տեղեկագիրը, վարչութեան բոլոր թղթերն, եւ խնդիրը քննենք մանրամասնա-բար, բայց որպէս զի կարենանք պատրաս-տուիլ կանխաւ խնդիրն ուսումնասիրելու, ժո-ղովին գումարումէն 24 ժամ առաջ հաղոր-դուած ըլլալու են մեզ բոլոր գրութիւններն:

ԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ՄԷՐԵԷՄ—ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Բեմն ելնելուս համար մի կարծէք որ խնդրոյն վրայ պիտի խօսիմ, ես արդէն անցեալ նիստին ներկայ չէի եւ Ատենադրութիւնն ալ Խորհրդարանը մտած պահուս ստացայ, ուստի չգիտեմ թէ ինչ ուղղութիւն առած է խնդիրն, միայն թէ անոր լուծման եղանակին վրայ երկու խօսք պիտի ընեմ, եւ կը յուսամ ելք մը ցայց տալ ձեզ: Եղած վիճարանութիւններն եւ մանա-ւանդ առաջարկութիւններն կը յայտնեն որ խնդիրն չնկատուած հանգամանք մ'ունի, եւ այն է առանձինն երկու մասերէ բաղկանալն: առաջինն Խորհրդութեան եւ երկրորդը յե-տաձգման կարօտ, ուստի թէ մին եւ թէ միւ-սը պահանջողները իրենց իրաւունքն ունին, բայց խնդրոյն երկու մասանց համար առան-ձինն, զորս պէտք է զանազանել: ֆիլիպպոս եպիսկոպոսի խնդիր մը կայ, զոր Ազգային ժողովն նախ Յարաբերութեան եւ ի վերջէ ի-րաւասութեան դիւանին յղեր է, միւս կողմէ հեռագիր մը կայ Տիգրանակերտի գաւառէն ուղղուած, որ խնդրոյ եւ ուշադրութեան

նիւթ եղած է: ֆիլիպպոս եպիսկոպոս գա-տաւորան կը պահանջէ իւր պաշտօնանկու-թեան համար, այս է Յարաբերութեան դի-ւանի յղուած խնդիրն, որ պարզապէս անձի խնդիր է, իսկ հեռագիրը Տիգրանակերտի վի-ճակին անհովիւ եւ տեղական գործոց անխնամ մնալը կը ծանուցանէ, եւ տեղապալ մը կը խնդրէ, այս ալ անաւասիկ գաւառին վերաբեր-եալ խնդիր մ'է:

Երբ այսպէս խնդիրն երկուքի բաժնուի, ինչպէս որ է իրապէս, կարելի է դիւրութեամբ մէջէն դուրս ելնել: Բայց առանց բաժնելու զայն ֆիլիպպոս եպիսկոպոսի խնդրոյն անմի-ջական լուծումը պահանջողները պիտի տեսնեն որ նիւթական անկարելիութիւն կայ: պարագա-ներ կան, որոց վրայ վարչութեանն բացատ-րութիւն պէտք է պահանջել, ուստի հապճե-պով հոս խնդիրը լուծելու ելնել անկարելի է:

Կը տեսնէք որ 70 ի չափ թուղթեր ներ-կայացնել կուզուի վարչութեան կողմէ, որը ընթերցման եւ քննութեան կարօտ են, թե-րեւս ուրիշ թղթեր ալ կցուին անոնց, թերեւս մեզնէ մէկը ելնէ յայտարարէ թէ մասնաւոր ըսելիքներ ունի: ասոնց համար չէ թէ այս նիստն, որու ժամանակը լրացած է, այլ քա-նի մը նիստ չեն բաւեր: Արդէն տօնական օ-րերն մօտալուտ են, եւ Ազգ. ժողովն առ նուազն մէկ ամսէն առաջ չէ կարող նորէն գումարուիլ, ինչպէս կարելի է աւրեմն այդ խնդիրը շուտով լուծել վերջացնել: Երբ խնդ-րոյն այդ երկու մասերն իրարմէ անանջատ պահենք, իրեւ ձգողական եւ վանողական եօ-րութիւն գտնել անշարժութեան մէջ կը սեւե-ռեն եւ անհնար կը ըլլայ ոչ մին եւ ոչ միւսը տնօրինել: Ուստի, կը կրկնեմ, պէտք է զանոնք բաժնել իրարմէ, եւ Տիգրանակերտի գաւառի կացութիւնը բարեւեղելու խնդիրն անմիջապէս ձեռք առնելով՝ վարչութեան յանձնարարել, որ գաւառին շահերն ինչ որ կը պահանջեն ըստ այնմ տնօրինէ զարժանն, իսկ միւս կողմէ ֆի-լիպպոս եպիսկոպոսի խնդրոյն քննութեանն համար սպասել Նախաքննիչ գիւանի տեղեկա-գրին:

ԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Որովհետեւ քուէ խնդ-րողներ կան, ժողովին կը դիմեմ հասկնալու համար թէ կուզէ վիճարանութիւնը փակել:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ձէք կրնար վի-ճարանութիւնը փակուիլ քուէի դնել: Կը բո-ղոքեմ:

Եւ Ատենապետ էֆէնտին վիճարանու-թեան փակումը քուէի կը դնէ եւ ժողովը մեծագոյն մասամբ ԿԸՆԴՈՒՆԻ զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Վիճարանութիւնը վերջացած է: այլ եւս կը մնայ խնդրոյն քուէ-արկութիւնը ձեռք առնուլ: Մէրեմ-գուլի է-ֆէնաին կառավարկէ զայն երկու մասի բաժ-նել, եւ ֆիլիպպոս եպիսկոպոսի վարչութեան դէմ մատուցած բողոքը, եւ Տիգրանակերտի գաւառին վիճակը զարմանելու խնդիրն ու-րոյն նկատողութեան առնուլ, եւ արդար ո-րոշում մը տալ անոնց վրայ: Արդ ժողովին կը հարցնեմ թէ կուզէ՞ խնդրոյն այս կերպով ան-ջատուիլ:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քու-էի կը դնէ խնդիրն, եւ ժողովն մեծագոյն մասամբ՝ ըստ առաջարկութեան Մէրեմ-գու-լի էֆէնտինի՝ խնդրոյն երկու մասի բաժանու-մը ԿՈՐՈՇԷ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այս որոշման համա-ձայն անաւասիկ երկու խնդիր ունինք մեր առջեւ, առաջինն է ֆիլիպպոս եպիսկոպոսի բողոքը վարչութեան դէմ: Արդէն իրաւա-սութեան դիւանին քննութեան յանձնուած է այս խնդիրն, որ կը խոստանայ իւր տեղեկա-գիրը բերել, միւս կողմէ՝ վարչութիւնը կը յայտարարէ թէ պատրաստ է ճայս մասին համար տալ, եւ իւր գրութիւններն ներկայացնել կուզէ, զորս անշուշտ տպեալ պիտի ներ-կայացնէ ժողովին:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Այդ գրերն տը-պագրելու հարկ չկայ, կրնայ յատենի աստ կարդացուիլ, եւ ժողովն անոնց պարունա-կութեան տեղեկանալ: Երբ ֆիլիպպոս եպիս-կոպոս իւր պաշտօնանկութեան համար բողոք

կը բաժնար, ըսի իրեն թէ ես կը կարգադրեմ իւր խնդիրն եւ պատուիրեցի որ Ազգ. ժողովին չդիմէ, սակայն նա՝ չուզեց լսել յորդորանացս, եւ եկաւ բողոք բարձաւ. ուստի պէտք է այժմ Վարչութիւնն ալ լսել, բայց պատշաճ չեմ տեսներ որ այդ գրերը տպագրուին:

Տ. ՄԱՏԹԷՆՍ. ԵՊԻՍԿՈՊՈՍ. — Իրաւասութեան դիւանն կրնայ այդ գրերը կտրղալով եզրակացութիւն մը հանել, բայց անհրաժեշտ է որ այս ժողովն մի առ մի տեսնէ զանոնք որ կատարեալ գաղափար մ'ունենայ գործին վրայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Նախագահ Սրբազան Հօր դիտողութենէն երբէք այն հետեւանքը յառաջ չգար որ Ազգ. ժողովը Վարչութեան ներկայացուցած գրերը չկարենայ տեսնել, բայց թէ այդ գրերն տպագրութեամբ պէտք է հաղորդուին թէ յատենի ընթերցմամբ, ուրիշ խնդիր մ'է այս, որ ի վերջէ կրնայ որոշուիլ, իսկ առ այժմ քանի սր ծաղովը խնդիրն երկու մասի բաժնելով՝ փիլիսոպոս եպիսկոպոսի անձնական դատն եւ վիճակին գործոց բարեւոքման խնդիրն իրարմէ տնջատեց, հարկ կըլլայ որոշել նախ, թէ ինչ պէտք է ընել փիլիսոպոս եպիսկոպոսի անձնական դատի խնդիրն: Այս մասին նախորդ նիստէն առաջարկութիւն մը կայ Պէրպէրեան էֆէնտիին կողմէ, որ կը պահանջէ՝ զփիլիսոպոս եպիսկոպոս համակիր տրամադրութեանց ներքեւ յանձնարարել Ս. Պատրիարք Հօր, սրպէս զի Նորին սրբազնութիւնը տնօրինէ զարժանն: Երկրորդ առաջարկութիւնն է՝ սոյն խնդրոյն նկատմամբ պէտք եղածը տնօրինելու համար՝ սպասել Իրաւասութեան դիւանի տեղեկագրին:

Ահաւասակ այս կրկին առաջարկութեանց վրայ՝ ժողովը կամբը պիտի խնդրեմ հիմա:

Եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտին խնդիրը քուէի կը դնէ, եւ ժողովը մեծազոյն մասամբ կՈՐՈՇԷ սպասել Իրաւասութեան դիւանի տեղեկագրին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖԷՆՏԻ, — Այժմ կը մնայ Տիգրանակերտի վիճակին գործոց բարեւոքման խնդիրը, այս մասին առաջարկութիւն մը կայ որ Տեղեմաք եւ Շահպաղ Եֆէնտիներու կողմէ կուգայ եւ կը պահանջէ Վարչութեան յանձնարարել որ առժամանակեայ կերպով Տեղապահ մ'անուանէ: Կուզէք խօսիլ այս մասին, թէ ոչ կը հաւանիք որ քուէի դնեմ:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես կը կարծեմ թէ Վարչութեան պատասխանատուութեան վերաբերեալ խնդիր մ'է այդ, եւ Ազգ. ժողովը այս մասին միջամտելու գործ մը չունի: Վարչութիւնն եթէ հարկ դատի, կրնայ Տեղապահ մ'անուանել, եպիսկոպոսներ զրկել, վերջապէս ինչ որ հարկ կըզայ տնօրինել եւ գործադրել. այս ամենն անոր վերաբերեալ խնդիրներն են եւ ինչ հարկ որ Ազգ. ժողովը Վարչութեան յանձնարարութիւններ ընէ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Քանի որ խնդիրն այս ժողովին քննութեան եւ որոշման ներկայացած է, ես չեմ ստանձներ զայն, մինչեւ որ Ազգ. ժողովը լացորոշապէս իր որոշումը չտայ եւ պէտք եղած տնօրէնութիւնն չընէ:

ՇԱՀՊԱԶ Ն. ԷՖ. — Հարկ կը համարիմ զի տեղ տալ որ փիլիսոպոս եպիսկոպոսի անձնական դատն այլ է, Տիգրանակերտի խնդիրն այլ, եւ Սրբազան Պատրիարք Հօր եւ Վարչութեան յանձնարարելի խնդիրն՝ այս վերջինն է միայն:

ՍՐԲԱԶԱՆ ՆԱԽԱԳԱՀ. — Ինչպէս յայտարարեցի պէտք է որ Ազգ. ժողովն իր որոշումը տալով յանձնէ խնդիրն Վարչութեան, եթէ ոչ որ եւ է տնօրինութիւն չեմ կրնար կատարել:

Եւ Ամեն Սրբազան Պատրիարքն այս յայտարարութիւնն ընելով կը մեկնի ժողովէն:

ՄԱՄԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՖ. — Ես կը կար-

ծեմ թէ այս ժողովը պէտք է երբէք որ առաջնորդական խնդրոց միջամտութիւն ընէ, ինչպէս որ չէ ըրած ցարդ. Վարչութեան պաշտօնին կը վերաբերի, այսպիսի խնդիրներ տնօրինել, եւ նահանջելու իրաւունք չունի, ուստի Ազգ. ժողովը պէտք է վերապահէ իրեն փիլիսոպոս եպիսկոպոսի անձնական դատին քննութիւնը, իսկ զաւառին խնդիրը յանձնէ Վարչութեան տնօրէնութեան, որ պարտաւոր է կամ Ազգ. ժողովոյ յանձնարարութիւնը գործադրել, եւ կամ հրաժարիլ, եթէ չուզէ համակերպիլ:

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Շատ իրաւացի են Մամիկոնեան էֆէնտիի դիտողութիւններն, ես ալ մի եւ նոյն յայտարարութիւնն պիտի ընէի, շնորհակալ եմ իրեն որ հարկ չի դուց ինձ խօսելու: Եթէ այսօր բացառութիւն մ'ընենք, ուրիշ որ ալ նմանօրինակ պահանջումներ կրնան լինիլ Ազգ. ժողովէն, եւ ես կը փափաքիմ որ այդ ժողովն այս աստիճան նուաստութեան չխոնարհի:

Այս բառին դէմ ամենուստ բողոքոյ ձայներ կը բարձրանան եւ շուկ կընթանայ ժողովին մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կը տեսնէք, Ալիքսանեան էֆէնտի, որ այդ բառը անախորժ կը հնչէ ժողովին եւ դժգոհութեան ձայներ կը յարուցանէ, ուստի շնորհ ըրէք ետ առնուլ զայն՝ որ կնճիռ մը չծագի այնպիսի ատեն մ'երբ խնդրոյն լուծմանը հասած ենք:

ԱԼԻՔՍԱՆԵԱՆ Մ. ԷՖ. — Շատ աղէկ, ես չեմ ընդդիմանար եւ յետս կը կոչեմ այդ բառը, միայն թէ կը պնդեմ որ Ազգ. ժողովը պէտք է յանձնարարէ Վարչութեան որ Տիգրանակերտի գաւառին պիտոյից եւ օգտին համաձայն զարժանն ի գործ դնէ, առաջնորդի ընտրութեան հրաման յուղարկելով կամ Տեղապահ մ'անուանելով, ինչպէս որ հարկ է:

Տ. ՄԱՏԹԷՆՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Եթէ Սրբազան Պատրիարքը չյօժարիր այս

խնդրոյն մէջ՝ առանց Ազգ. ժողովոյ որոշմանը գործադրութիւն մ'ընել. պատճառն այն է որ փիլիսոպոս եպիսկոպոս Նորին սրբազնութեան խոստացեր է խնդիրը հոս չընել, սակայն ի վերջէ դիմեր է Ազգ. ժողովին, որու համար Սրբազան Պատրիարքը վշտացած կերեւի, եւ կուզէ Ազգ. ժողովոյ որոշումն չառած գործողութիւն մը չկատարել. բայց կաղաչենք որ մեզմէ իւր վիշտն եւ պէտք եղած գործադրութիւնն ընէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Փիլիսոպոս եպիսկոպոսի պաշտօնանկութիւնը խնդրոյ եւ քննութեան ներքեւ ինկած է, ուստի բնականաբար Առաջնորդի ընտրութիւն չէ կարելի կատարել, մինչեւ որ դատին արդիւնքը երեւան չեղնէ: Եւ սակայն պէտք է որ Ազգ. ժողովը այս դատը տեսնելու պայմանաւ յանձնարարէ Վարչութեան՝ Տիգրանակերտի վիճակին առժամանակեայ տնօրինութիւն մ'ընելու համար, որպէս զի մինչեւ ցաւարտ քննութեան գաւառն անհովիւ եւ թափուր չը մնայ այսպիսի փափուկ ժամանակի մէջ: Իսկ Սրբազան Պատրիարք Հայրը կարծեմ ըսել կուզէ թէ ժողովը բացորոշ տնօրինութիւն մ'ընելու է, քանի որ խնդիրը ժողովին եկած եւ ժողովը զայն ստանձնած է:

ԶԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

Տ. ՄԱՏԹԷՆՍ ԵՊՍ. ԻԶՄԻՐԼԵԱՆ. — Անշուշտ քանի որ փիլիսոպոս եպիսկոպոս վարչութեան դէմ բողոքած եւ ժողովն անոր դատը տեսնելու որոշում տուած է, չկրնար առաջնորդի ընտրութիւն տեղի ունենալ:

ՄԷՐԵԷՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — Ես կը կարծեմ որ այսպիսի մանրամասնութեանց մտնել աւելորդ է, երբ Ազգ. ժողովը խնդիրը Վարչութեան յանձնարարէ, սլարգապէս կը բաւէ ըսել որ Տիգրանակերտի գաւառին շահուց համաձայն տնօրինէ զարժանն:

ԶԱՅՆԵՐ. — Քուէ, քուէ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ.— Խօսից կարգն սպառնացաւ, ուստի խնդրոյն այս երկրորդ կէտն ալ պիտի քուէի դնեմ այժմ։ Եւ ժողովին կամքը հարցնեմ թէ կուզէ՞ յանձնարարել Վարչութեան որ Տիգրանակերտի գաւառին խընդիրը տեղւոյն ժողովրդեան շահուց համաձայն տնօրինէ։

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ խնդիրն, եւ ժողովն մեծագոյն մասամբ կՈՐՈՇԷ՝ ըստ առաջարկութեան Մէրեէմ-Գուլի էֆէնտիին՝ յանձնարարել Աղգային Վարչութեան որ Տիգրանակերտի գաւառին

խնդիրը տեղւոյն ժողովրդեան շահուց համաձայն տնօրինէ։

Ատենապետ կը փակուի ժամ 10 ին, յառաջիկայ նիստն Ա. Մանդեան ռեթօրէից յաջորդ շաբթուն գումարելու պայմանաւ։

Ատենապետի խօսքը
Մ. Յ. ՄԷԼԻԲԱՆ Տ. ԵՈՒՍՈՒՅԵԱՆ

ԱՋԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Տ. Մկրտիչ	Ս. Արքեպս.	Խրիմեան	Ա. Արեւուդէր
2	Տ. Խորէն	Ս. »	Նար-պէ	
3	Տ. Կարապետ	Ս. Եպս.	Սերովբեան	
4	Տ. Մատթէոս	Ս. »	Իզմիրլեան	Բ. Արեւուդէր
5	Տ. Ամբրոսիոս	Մ. Վրդ.	Ռուբինեան	
6	Տ. Դարեգին	Մ. »	Թաթարեան	
7	Տ. Ներսէս	Մ. »	Ասլանեան	
8	Տ. Պօղոս	Մ. »	Խօլտամեան	
9	Տ. Արիստակէս	Աւագ	Բէն. Մամրէեան	
10	Տ. Խորէն	»	Փէհլիւլանեան	Բ. Արեւուդէր
11	Տ. Սահակ	»	Տ. Սարգիսեան	Ա. Արեւուդէր

ԲԱՐԱՐԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Աւագիւլ էֆէնտի	Ալթուն Տիւրքի	Ա. Արեւուդէր
2	Գէորգ	» Դըլքեան	
3	Գաբրիէլ	» Եսաեան	
4	Լօղօֆէթ	» Պալեօղեան	
5	Մարտիրոս	» Միւհէնտիսեան	
6	Մկրտիչ	» Յրէնկեան	
7	Յակոբ	» Զօպանեան	
8	Սահակ	» Ղաղարոսեան	
9	Ստեփան	» Պէլիկեան	Բ. Արեւուդէր
10	Խաչատուր Խան	Տ. Ներսիսեան	

ԳԼՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

ԱՏԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՔ

1. Վաւերացումն ժ. Գ. նիստի աստենագրութեան
2. Բացակայութիւն երեսփոխանաց .
3. Թիֆլիսի Գայիանեան Հայ օրիորդաց Ուսումնարանին արդւած նուէրն :

Ա. Բողոքագիր Տիգրանակերտի զադարեալ Առաջնորդ Տ. Փիլիպպոս Կալիս-
կոպոսի :

ԳԻՆ 2 դրոշ

ՍԵՓԶԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԻՆ

ԱԶԴԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ ԵԱՒՈՒՅ ՅԱՏԿԱՅԵԱԼ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի Է. Ղալաքիոյ Ս. Լուսաւորիչ
Եկեղեցւոյ բանկայը Է. Հայ գրավաճառաց բով